

25.01
Ա-99

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ս. Ղ. ԱՖՅԱՆ, Ա. Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2001

ՀՏԴ 519.7
ԳՄԴ 22.161.6
Ա 997

Աֆյան Ս.Դ., Պողոսյան Ա.Վ.

Ա- 997 Մաթեմատիկական ֆիզիկայի խնդիրների ժողովածու;
Երևանի համալս., Եր., 2001, 200 էջ:

Ժողովածուում շարադրված են «մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ» դասընթացի հիմնական գաղափարներն ու փաստերը, իսկ լսարանային և ինքնուրույն աշխատանքի համար առաջադրված է ավելի քան 700 խնդիրներ և հավասարումներ:

Խնդիրների որոշ մասն ընտրված է ավանդական խնդրագրքերից, որոնց հարստացվել են նոր խնդիրներով ֆիզիկայի և մեխանիկայի տարբեր բնագավառներից վերցրած:

Ժողովածուն ընդգրկում է մասնակի ածանցյալներով գծային երկրորդ կարգի հիպերբոլական, պարաբոլական և էլիպտական տեսակի հավասարումների տեսության հիմնական բաժինները: Նշանակալից տեղ է հատկացված փոփոխականների անջատման մեթոդով և ինտեգրալային ձևափոխությունների օգնությամբ լուծվող խնդիրներին: Վերջում առանձնացվել են այն խնդիրները և հավասարումները, որոնց լուծման համար անհրաժեշտ է ներմուծել հատուկ ֆունկցիաներ:

Նախատեսված է բուհերի ուսանողների համար:

Ա $\frac{1602070100}{704(02) 2001}$ 2001 թ.

ԳՄԴ 22.161.6

ԵՊՀ Գրադարան



SU0207338

231095

ISBN 5-8084-0393-6

© ԱՖՅԱՆ Ս. Դ., ՊՈԴՈՍՅԱՆ Ա. Վ., 2001 թ.

ՆԱԽՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

Այնպիսի հավասարումը, որը կապ է ստեղծում $x_1, x_2, \dots, x_n$ անկախ փոփոխականների, $u(x_1, x_2, \dots, x_n)$ որոնելի ֆունկցիայի և նրա մասնակի ածանցյալների միջև՝ կոչվում է *մասնակի ածանցյալներով հավասարում*, այսինքն, այն հետևյալ տեսքի հավասարում է

$$F(x_1, \dots, x_n, u, u_{x_1}, \dots, u_{x_n}, u_{x_1 x_1}, \dots, u_{x_n x_n}, \dots) = 0, \quad (1)$$

որտեղ F -ը հայտնի ֆունկցիա է:

(1) հավասարման մեջ մասնակցող ամենաբարձր կարգի ածանցյալի կարգը՝ կոչվում է այդ հավասարման կարգ: Օրինակ, առաջին կարգի x_1 և x_2 անկախ փոփոխականներով ամեն մի հավասարում ունի հետևյալ տեսքը

$$F(x_1, x_2, u, u_{x_1}, u_{x_2}) = 0,$$

երկրորդ կարգինը՝

$$F(x_1, x_2, u, u_{x_1}, u_{x_2}, u_{x_1 x_1}, u_{x_1 x_2}, u_{x_2 x_2}) = 0 :$$

(1) տեսքի հավասարումը կոչվում է *քվադրատային* հավասարում, եթե այն գծային է միայն ամենաբարձր կարգի ածանցյալների նկատմամբ: Օրինակ,

$$A(x_1, x_2, u, u_{x_1}, u_{x_2})u_{x_1 x_1} + B(x_1, x_2, u, u_{x_1}, u_{x_2})u_{x_1 x_2} + \\ + C(x_1, x_2, u, u_{x_1}, u_{x_2})u_{x_2 x_2} = D(x_1, x_2, u, u_{x_1}, u_{x_2}) :$$

Մասնակի ածանցյալներով հավասարումը կոչվում է *գծային հավասարում*, եթե այն գծային է որոնելի ֆունկցիայի և նրա բոլոր ածանցյալների նկատմամբ: Օրինակ,

$$A(x, y)u_{xx} + 2B(x, y)u_{xy} + C(x, y)u_{yy} + \\ + D(x, y)u_x + E(x, y)u_y + F(x, y)u = G(x, y)$$

հավասարումը գծային երկրորդ կարգի հավասարում է $u(x, y)$ անհայտ ֆունկցիայի նկատմամբ:

Մասնակի ածանցյալներով *հավասարման լուծում* կոչվում է ամեն մի ֆունկցիա, որը և իր ածանցյալները տեղադրելով համապատասխանաբար որոնելի ֆունկցիայի և նրա ածանցյալների փոխարեն հավասարումը դառնում է նույնություն անկախ փոփոխականների նկատմամբ (այն բազմության վրա, որտեղ տրված է հավասարումը):

1. Պարզել՝ հանդիսանում են արդյոք ստորև բերված հավասարումները մասնակի ածանցյալներով հավասարումներ, թե ոչ

ա. $\cos(u_x + u_y) - \cos u_x \cos u_y + \sin u_x \sin u_y = 0 :$

բ. $u_{xx}^2 + u_{yy}^2 - (u_{xx} - u_{yy})^2 = 0 :$

գ. $\sin^2(u_{xx} + u_{xy}) + \cos^2(u_{xx} + u_{xy}) - u = 1 :$

դ. $\sin(u_{xy} + u_x) - \sin u_{xy} \cos u_x - \cos u_{xy} \sin u_x + 2u = 0 :$

ե. $(\operatorname{tg} u)_x - u_x \sec^2 u - 3u + 2 = 0 :$

զ. $\log|u_x u_y| - \log|u_x| - \log|u_y| + 5u - 6 = 0 :$

2. Պարզել հավասարումների կարգը

ա. $\log|u_{xx} u_{yy}| - \log|u_{xx}| - \log|u_{yy}| + u_x + u_y = 0 :$

բ. $u_x u_{xy}^2 + (u_{xx}^2 - 2u_{xy}^2 + u_y)^2 - 2xy = 0 :$

գ. $\cos^2 u_{xy} + \sin^2 u_{xy} - 2u_x^2 - 3u_y + u = 0 :$

դ. $2(u_x - 2u)u_{xy} - ((u_x - 2u)^2)_y - xy = 0 :$

ե. $(u_{yy}^2 - u_y)_x - 2u_{yy}(u_{xy} - u_x)_y - 2u_x + 2 = 0 :$

զ. $2u_{xx}u_{xxy} - ((u_{xx} - u_y)^2)_y - 2u_y u_{xxy} + u_x = 0 :$

3. Պարզել, թե հետևյալ հավասարումներից որոնք են գծային (համասեռ կամ անհամասեռ) և որոնք ոչգծային (քվադրատային)

ա. $u_x u_{xy}^2 + 2x u_{xy} - 3x y u_y - u = 0 :$

բ. $u_y u_{xx} - 3x^2 u_{xy} + 2u_x - f(x, y)u = 0 :$

գ. $2 \sin(x + y)u_{xx} - x \cos y u_{xy} + x y u_x - 3u + 1 = 0 :$

դ. $x^2 y u_{xxy} + 2e^x y^2 u_{xy} - (x^2 y^2 + 1)u_{xx} - 2u = 0 :$

ե. $3u_{xy} - 6u_{xx} + 7u_y - u_x + 8x = 0 :$

զ. $u_{xy}u_{xx} - 3u_{yy} - 6xu_y + xyu = 0 :$

է.. $a(x, y)u_{xx} + b(x, y)u_{xy} + c(x, y)u_{yy} + d(x, y)u_x +$
 $+e(x, y)u_y + h(x, y) = 0 :$

ը. $a(x, y, u_x, u_{xy})u_{xyy} + b(x, y, u_{yy})u_{yyy} + 2uu_{xy}^2 - f(x, y) = 0 :$

թ. $u_{xy} + u_y + u^2 - xy = 0 :$

ժ. $u_{xy} + 2(u_x^2 + u)_x - 6x \sin y = 0 :$

ի. $2xu_{xy} - 6(u^2 - xy)_x + u_{yy} = 0 :$

լ. $(yu_y + u_x^2)_y - 2u_xu_{xy} + u_x - 6u = 0 :$

Գ Լ ՈՒ Խ I

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻ ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐՈՎ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ: ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՏԵՄՔԻ ԲԵՐՈՒՄԸ

§1. Առաջին կարգի մասնակի ածանցյալներով հավասարումներ:
Կոշիի խնդիր

1. Առաջին կարգի գծային հավասարման

$$a_1 \frac{\partial z}{\partial x_1} + \dots + a_n \frac{\partial z}{\partial x_n} = b \quad (1)$$

բոլոր լուծումները, որոշ մասնավոր դեպքերում, կարելի է գտնել հետևյալ ձևով: Դիցուք հնարավոր է գտնել

$$\frac{dx_1}{a_1} = \dots = \frac{dx_n}{a_n} = \frac{dz}{b}$$

սովորական ածանցյալներով հավասարումների համակարգի n հատ գծորեն անկախ

$$\varphi_1(x_1, \dots, x_n, z) = C_1, \dots, \varphi_n(x_1, \dots, x_n, z) = C_n \quad (2)$$

առաջին ինտեգրալները: Այդ դեպքում (1) հավասարման բոլոր լուծումները ստացվում են

$$F(\varphi_1, \dots, \varphi_n) = 0$$

հավասարումով, որտեղ F -ը կամայական դիֆերենցելի ֆունկցիա է:

Մասնավորապես, եթե z փոփոխականը մտնում է առաջին ինտեգրալներից միայն մեկի մեջ՝ ասենք վերջինի, ապա (1) հավասարման **ընդհանուր լուծումը** գտնվում է հետևյալ հավասարումից

$$\varphi_n(x_1, \dots, x_n, z) = f(\varphi_1, \dots, \varphi_{n-1}), \quad (3)$$

որտեղ f -ը կամայական դիֆերենցելի ֆունկցիա է:

2. Մասնակի ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումների համար ամենակարևոր խնդիրներից մեկը՝ *Կոշիի խնդիրը* է՝

գտնել $F(x_1, \dots, x_n, u, u_{x_1}, \dots, u_{x_n}) = 0$ հավասարման այնպիսի լուծում, որն անցնի տրված l կորով:

Դիցուք պահանջվում է գտնել այն $z = z(x, y)$ մակերևույթը, կամ որ ունեն $z(x, y)$ ֆունկցիան, որը բավարարի

$$a_1(x, y, z) \frac{\partial z}{\partial x} + a_2(x, y, z) \frac{\partial z}{\partial y} = b(x, y, z) \quad (4)$$

մասնակի ածանցյալներով հավասարմանը և այդ մակերևույթն անցնի

$$x = u(t), \quad y = v(t), \quad z = w(t) \quad (5)$$

կորով: Սկզբում գտնում ենք

$$\frac{dx}{a_1} = \frac{dy}{a_2} = \frac{dz}{b}$$

համակարգի երկու անկախ առաջին ինտեգրալներ՝

$$\varphi_1(x, y, z) = C_1, \quad \varphi_2(x, y, z) = C_2 \quad (6)$$

և x, y, z փոփոխականների փոխարեն տեղադրելով նրանց (5) արտահայտությունները, ստանում ենք հետևյալ երկու հավասարությունները

$$\Psi_1(t) = C_1, \quad \Psi_2(t) = C_2 :$$

Այնուհետև, նրանցից արտաքսելով t պարամետրը, ստացվում է $F(C_1, C_2) = 0$ արտահայտությունը: C_1 -ի և C_2 -ի փոխարեն տեղադրելով առաջին ինտեգրալների ծախ մասերը՝ ստանում ենք (4) հավասարման որոնելի լուծումը:

Դիտողություն: Որոշ դեպքերում հարմար է օգտվել հավասար կոտորակների հետևյալ հատկությունից եթե

$$\frac{a_1}{b_1} = \frac{a_2}{b_2} = \dots = \frac{a_n}{b_n} = t,$$

ապա կամայական $k_1, k_2, \dots, k_n$ թվերի համար ճիշտ է՝

$$\frac{k_1 a_1 + k_2 a_2 + \dots + k_n a_n}{k_1 b_1 + k_2 b_2 + \dots + k_n b_n} = t :$$

4. Գտնել հետևյալ հավասարումների ընդհանուր լուծումները

ա. $yz_x - xz_y = 0 :$

բ. $(x + 2y)z_x - yz_y = 0 :$

գ. $xu_x + yu_y + zu_z = 0 :$

դ. $(x - z)u_x + (y - z)u_y + 2zu_z = 0 :$

ե. $yz_x + xz_y = x - y :$

զ. $e^x z_x + y^2 z_y = ye^x :$

է. $2xz_x + (y - x)z_y = x^2 :$

ը. $xyz_x - x^2 z_y = yz :$

թ. $xz_x + 2yz_y = x^2 y + z :$

ժ. $(x^2 + y^2)z_x + 2xyz_y + z^2 = 0 :$

ի. $2y^4 z_x - xyz_y = x\sqrt{z^2 + 1} :$

լ. $x^2 z z_x + y^2 z z_y = x + y :$

խ. $yz z_x - xz z_y = e^z :$

ձ. $(z - y)^2 z_x + xz z_y = xy :$

կ. $xyz_x + (x - 2z)z_y = yz :$

հ. $yz_x + zz_y = \frac{y}{x} :$

ճ. $\sin^2 x z_x + tg z z_y = \cos^2 z :$

դ. $(x + z)z_x + (y + z)z_y = x + y :$

Ն. $(xz + y)z_x + (x + yz)z_y = 1 - z^2 :$

$$d. (y+z)u_x + (z+x)u_y + (x+y)u_z = u :$$

$$j. xu_x + yu_y + (z+u)u_z = xy :$$

$$n. (u-x)u_x + (u-y)u_y - zu_z = x+y :$$

5. Գտնել հավասարման այն լուծումը, որը կբավարարի

նշված պայմանին

$$ա. xz_x - yz_y = 0, \quad z(x, 1) = 2x :$$

$$բ. z_x + (2e^x - y)z_y = 0, \quad z(0, y) = y :$$

$$գ. 2\sqrt{x}z_x - yz_y = 0, \quad z(1, y) = y^2 :$$

$$դ. u_x + u_y + 2u_z = 0, \quad u(1, y, z) = yz :$$

$$ե. xu_x + yu_y + xyu_z = 0, \quad u(x, y, 0) = x^2 + y^2 :$$

6. Գտնել այն մակերևույթը, որը բավարարում է տրված հավասարմանը և անցնում է տրված կորով

$$ա. y^2z_x + xyz_y = x, \quad x = 0, \quad z = y^2 :$$

$$բ. xz_x - 2yz_y = x^2 + y^2, \quad y = 1, \quad z = x^2 :$$

$$գ. xz_x + yz_y = z - xy, \quad x = 2, \quad z = y^2 + 1 :$$

$$դ. tgzx_x + yz_y = z, \quad y = x, \quad z = x^3 :$$

$$ե. xz_x - yz_y = z^2(x - 3y), \quad x = 1, \quad yz + 1 = 0 :$$

$$գ. xz_x + yz_y = z - x^2 - y^2, \quad y = -2, \quad z = x - x^2 :$$

$$է. yzz_x + xzz_y = xy, \quad x = a, \quad y^2 + z^2 = a^2 :$$

$$ը. zz_x - xyz_y = 2zx, \quad x + y = 2, \quad yz = 1 :$$

$$թ. zz_x + (z^2 - x^2)z_y = -x, \quad y = x^2, \quad z = 2x :$$

$$ժ. (y - z)z_x + (z - x)z_y = x - y, \quad z = y = -x :$$

$$ի. xz_x + (xz + y)z_y = z, \quad x + y = z, \quad xz = 1 :$$

$$լ. y^2z_x + yzz_y = -z^2, \quad x - y = 0, \quad x - yz = 1 :$$

$$խ. xz_x + zz_y = y, \quad y = 2z, \quad x + 2y = z :$$

$$ծ. (y + 2z^2)z_x - 2x^2zz_y = x^2, \quad x = z, \quad y = x^2 :$$

$$կ. (x - z)z_x + (y - z)z_y = 2z, \quad x - y = 2, \quad z2x = 1 :$$

$$հ. xy^3z_x + x^2z^2z_y = y^3z, \quad x - z^3, \quad y = z^2 :$$

§2. Երկրորդ կարգի հավասարումների դասակարգումը

Երկրորդ կարգի քվադրատային ամեն մի հավասարում ունի հետևյալ տեսքը

$$\sum_{i,j=1}^n a_{ij}(x_1, x_2, \dots, x_n) u_{x_i x_j} + f(x_1, x_2, \dots, x_n, u, u_{x_1}, \dots, u_{x_n}) = 0, \quad (1)$$

որտեղ a_{ij} գործակիցները R_n տարածության որևէ D տիրույթում տրված իրական ֆունկցիաներ են, ըստ որում $a_{ij} = a_{ji}$: Ֆիքսենք $(x_1^0, x_2^0, \dots, x_n^0) \in D$ կետը և կազմենք հետևյալ քառակուսային ձևը՝

$$Q(t_1, t_2, \dots, t_n) = \sum_{i,j=1}^n a_{ij}(x_1^0, \dots, x_n^0) t_i t_j : \quad (2)$$

Հայտնի է, որ կարելի է գտնել $t_1, t_2, \dots, t_n$ փոփոխականների այնպիսի

$$t_i = \sum_{k=1}^n h_{ik} \tau_k, \quad i = 1, 2, \dots, n$$

գծային չվերասերվող ձևափոխություն, որի միջոցով Q քառակուսային ձևը բերվի

$$Q = \sum_{i=1}^n \alpha_i \tau_i^2 \quad (3)$$

կանոնական տեսքի, որտեղ α_i գործակիցներից յուրաքանչյուրը $1, -1, 0$ թվերից որևէ մեկն է: Q -ի (3) տեսքում բացասական և զրո գործակիցների քանակը կախված չէ կանոնական տեսքի բերող գծային ձևափոխությունից: Այս փաստի վրա է հիմնված (1) տեսքի հավասարումների դասակարգումը:

(1) հավասարումը D բազմության վրա անվանում են ա. *էլիպտական*, բ. *հիպերբոլական*, և գ. *պարաբոլական*, եթե D -ի յուրաքանչյուր կետում

բառակուսային ձևի կանոնական տեսքի ա. բոլոր n գործակիցները դրական են, կամ բոլորը բացասական են, բ. գործակիցներից $(n - 1)$ հատը մի նշանի են, իսկ n -րդը հակառակ նշանի է, գ. գործակիցներից գոնե մեկը զրո է:

7. Պարզել հետևյալ հավասարումների տեսակը

ա. $u_{xx} - 2u_{xy} + 3u_{yy} + u_x - u_y + 3u - xy^2 = 0 :$

բ. $u_{xx} + 2u_{xy} - 3u_{yy} - u_x + u_y - 2u - x^2y = 0 :$

գ. $u_{xx} - 2u_{xy} + u_{yy} + 2u_x - u = 0 :$

դ. $u_{xx} + 2u_{yy} + 3u_{zz} - 2u_{xy} + 2u_{xz} - 4u_{yz} + 3u = 0 :$

ե. $u_{xy} + u_{xz} - u_{yz} + 2u_x - 3u = 0 :$

զ. $u_{xx} + 2u_{yy} + u_{zz} - 2u_{xy} + 2u_{yz} - u_x + 2u_y - u = 0 :$

է. $u_{xx} + 2u_{yy} + u_{zz} - 4u_{xy} + 2u_{yz} - xye^z = 0 :$

ը. $u_{xx} - 4u_{xy} + 2u_{xz} + 4u_{yy} + u_{zz} - 2xyu_x + 3xu = 0 :$

թ. $u_{xx} + 2u_{xy} + 2u_{yy} - 2u_{yz} + u_{zz} - u + xz^2 \cos y = 0 :$

ժ. $5u_{xx} + u_{yy} + 5u_{zz} + 4u_{xy} - 8u_{xz} - 4u_{yz} - u + yz \sin y = 0 :$

ի. $y^3u_{xx} + u_{yy} - u_x = 0 :$

լ. $xu_{xx} + yu_{yy} - u = 0 :$

խ. $(l + x)u_{xx} + 2xyu_{xy} - y^2u_{yy} = 0 :$

ճ. $u_{xx} + xu_{yy} = 0 :$

կ. $u_{xx} + xyu_{yy} = 0 :$

հ. $u_{xx} \operatorname{sign} y + 2u_{xy} + u_{yy} = 0 :$

ձ. $u_{xx} + 2u_{xy} + (1 - \operatorname{sign} y)u_{yy} = 0 :$

ղ. $u_{xx} \operatorname{sign} y + 2u_{xy} + u_{yy} \operatorname{sign} x = 0 :$

ճ. $x^2u_{xx} - y^2u_{yy} = 0 :$

Ն. $y^2u_{xx} + 2xyu_{xy} + x^2u_{yy} = 0 :$

§3. Մասնակի ածանցյալներով քվադրատային երկու անկախ փոփոխականներով երկրորդ կարգի հավասարումների բերումը կանոնական (շիտակ) տեսքի

Դիցուք պահանջվում է

$$Au_{xx} + 2Bu_{xy} + Cu_{yy} + F(x, y, u, u_x, u_y) = 0 \quad (1)$$

քվադրատային հավասարումը, որի A , B և C գործակիցները կախված են միայն x և y անկախ փոփոխականներից, բերել *կանոնական* տեսքի:

Կազմենք (1) հավասարման համապատասխանող

$$Q(t_1, t_2) = At_1^2 + 2Bt_1t_2 + Ct_2^2 \quad (2)$$

քառակուսային ձևը: Նշանակենք այդ ձևի $B^2 - AC$ որոշիչը Δ -ով: Ըստ §2 -ի դասակարգման, (1) հավասարումը կոչվում է էլիպտական, հիպերբոլական կամ պարաբոլական, եթե համապատասխանաբար ($\Delta < 0$), ($\Delta > 0$) կամ ($\Delta = 0$):

Դիտարկենք

$$A(dy)^2 - 2Bdydx + C(dx)^2 = 0 \quad (3)$$

դիֆերենցիալ հավասարումը նշված երեք դեպքերում:

ա. երբ $\Delta = B^2 - AC < 0$ (էլիպտական դեպքը), (3) քառակուսի հավասարումը լուծելով $\frac{dy}{dx}$ -ի նկատմամբ, եթե $A \neq 0$ (իսկ եթե $C \neq 0$ $\frac{dy}{dx}$ -ի նկատմամբ), ստանում ենք

$$\frac{dy}{dx} = \frac{B + i\sqrt{-\Delta}}{A} : \quad (4)$$

Դիցուք $\varphi(x, y) + i\psi(x, y) = const$ այդ հավասարման ընդհանուր ինտեգրալն է: Կատարելով անկախ փոփոխականների

$$\xi = \varphi(x, y), \quad \eta = \psi(x, y) \quad (5)$$

փոխարինումը, որի *յակոբիանը*

$$\frac{\partial(\varphi, \psi)}{\partial(x, y)} = \varphi_x \psi_y - \varphi_y \psi_x \neq 0,$$

(1) հավասարումը բերվում է հետևյալ կանոնական տեսքի

$$v_{\xi\xi} + v_{\eta\eta} + G(\xi, \eta, v, v_{\xi}, v_{\eta}) = 0 \quad (6)$$

բ. Երբ $\Delta = B^2 - AC > 0$ (հիպերբոլական դեպքը), (3) հավասարումը $\frac{dy}{dx}$ -ի նկատմամբ ունենում է երկու իրական արմատներ՝

$$\frac{dy}{dx} = \frac{B \pm \sqrt{\Delta}}{A} : \quad (7)$$

Դիցուք $\varphi(x, y) = \text{const}$ և $\psi(x, y) = \text{const}$ այդ հավասարումների ընդհանուր ինտեգրալներն են (դրանցով որոշվող կորերը կոչվում են (1) հավասարման *բնութագրիչներ*)։ Այս դեպքում (5) փոխարինումը (1) հավասարումը բերում է

$$v_{\xi\eta} + H(\xi, \eta, v, v_{\xi}, v_{\eta}) = 0 \quad (8)$$

կանոնական տեսքի։ $\xi = \alpha + \beta$, $\eta = \alpha - \beta$ նոր փոխարինումով (8) հավասարումը բերվում է հետևյալ կանոնական տեսքի՝

$$w_{\alpha\alpha} - w_{\beta\beta} + N(\alpha, \beta, w, w_{\alpha}, w_{\beta}) = 0 \quad (9)$$

գ. Երբ $\Delta = B^2 - AC = 0$ (պարաբոլական դեպքը), (3) հավասարումը ունենում է մեկ արմատ՝

$$\frac{dy}{dx} = \frac{B}{A} : \quad (10)$$

Դիցուք $\varphi(x, y) = \text{const}$ այդ հավասարման ընդհանուր ինտեգրալն է, իսկ $\psi(x, y)$ կամայական ողորկ ֆունկցիա է որի և $\varphi(x, y)$ -ի *յակոբիանը*

հավասար չէ զրոյի: Կատարելով (5) փոխարինումը, (1) հավասարումը այս դեպքում կբերվի

$$v_{\eta\eta} + P(\xi, \eta, v, v_\xi, v_\eta) = 0 \quad (11)$$

կանոնական տեսքի:

Նկատենք, որ, երբ (1) հավասարումը հաստատուն գործակիցներով գծային հավասարում է, կանոնական տեսքի բերելուց հետո կարելի է այն ավելի պարզեցնել: Այսպես, օրինակ, կատարելով անհայտ ֆունկցիայի

$$v = e^{\lambda\xi + \mu\eta} w$$

փոխարինումը, այնուհետև հարմար ծնով ընտրելով λ և μ հաստատունները, կարելի է հիպերբոլական և էլիպտական դեպքերում ազատվել w -ի առաջին կարգի ածանցյալներից, իսկ պարաբոլական դեպքում w -ից և նրա առաջին կարգի որևէ մի ածանցյալից:

8. Հետևյալ հավասարումները բերել կանոնական տեսքի այնպիսի տիրույթներում, ուր պահպանված է դիտարկվող հավասարման տեսակը

ա. $(1 + x^2)^2 u_{xx} + u_{yy} + 2x(1 + x^2)u_x = 0 :$

բ. $y^2 u_{xx} + 2xyu_{xy} + x^2 u_{yy} = 0 :$

գ. $u_{xx} - (1 + y^2)^2 u_{yy} - 2y(1 + y^2)u_y = 0 :$

դ. $(1 + x^2)u_{xx} + (1 + y^2)u_{yy} + xu_x + yu_y - 2u = 0 :$

ե. $x^2 u_{xx} + 2xyu_{xy} + y^2 u_{yy} - 2yu_x + ye^{\frac{y}{x}} = 0 :$

զ. $xy^2 u_{xx} - 2x^2 yu_{xy} + x^3 u_{yy} - y^2 u_x = 0 :$

է. $u_{xx} - 2\sin xu_{xy} - \cos^2 xu_{yy} - \cos xu_y = 0 :$

ը. $e^{2x} u_{xx} + 2e^{x+y} u_{xy} + e^{2y} u_{yy} - xu = 0 :$

թ. $u_{xx} - 2xu_{xy} = 0 :$

ժ. $xu_{xx} + 2xu_{xy} + (x - 1)u_{yy} = 0 :$

ի. $yu_{xx} + u_{yy} = 0 :$

լ. $u_{xx} + xyu_{yy} = 0 :$

խ. $9u_{xx} - 6u_{xy} + u_{yy} + 10u_x - 15u_y - 50u + x - 2y = 0 :$

ծ. $u_{xx} - 2u_{xy} + u_{yy} + 9u_x + 9u_y - 9u = 0 :$

9. Բերել կանոնական տեսքի (և այնուհետև պարզեցնել) հետևյալ հավասարումները

ա. $u_{xx} - 4u_{xy} + 5u_{yy} - 3u_x + u_y + u = 0 :$

բ. $u_{xx} - 6u_{xy} + 9u_{yy} - u_x + 2u_y = 0 :$

գ. $2u_{xy} - 4u_{yy} + u_x - 2u_y + u + x = 0 :$

դ. $u_{xy} + 2u_{yy} - u_x + 4u_y + u = 0 :$

ե. $2u_{xx} + 2u_{xy} + u_{yy} + 4u_x + 4u_y + u = 0 :$

զ. $u_{xx} + 2u_{xy} + u_{yy} + 3u_x - 5u_y + 4u = 0 :$

է. $u_{xx} - u_{yy} + u_x + u_y - 4u = 0 :$

ը. $u_{xy} + u_{xx} - u_y - 10u + 4x = 0 :$

թ. $3u_{xx} + u_{xy} + 3u_x + u_y - u + y = 0 :$

ժ. $u_{xx} + 4u_{xy} + 5u_{yy} - 2u_x - 2u_y + u = 0 :$

ի. $5u_{xx} + 16u_{xy} + 16u_{yy} + 24u_x + 32u_y + 64u = 0 :$

լ. $u_{xx} - 2u_{xy} + u_{yy} - 3u_x + 12u_y + 27u = 0 :$

խ. $u_{xx} - 4u_{xy} + 4u_{yy} + 3u_x = 0 :$

ծ. $u_{xx} - 4u_{xy} + 3u_{yy} + u_x - 2u_y + u = 0 :$

10. Բերել կանոնական տեսքի

ա. $u_{xx} + 2u_{xy} + 2u_{yy} + 4u_{yz} + 5u_{zz} = 0 :$

բ. $u_{xx} + 4u_{xy} + 4u_{yy} + 9u_{zz} + 6u_{xz} + 12u_{yz} - 2u_x - 4u_y - 6u_z = 0 :$

գ. $u_{xx} + 4u_{xy} + 4u_{yy} + 4u_{yz} + u_{zz} + 2u_{xz} + 2u = 0 :$

դ. $4u_{yy} - 2u_{xy} - 2u_{yz} + 4u = 0 :$

ե. $u_{xy} + u_{xz} + u_{yz} - u_x + u_y = 0 :$

զ. $u_{xx} - 4u_{xy} + 2u_{xz} + 4u_{yy} + u_{zz} + 3u_x = 0 :$

է. $u_{xx} + 2u_{yy} + u_{zz} - 4u_{xy} = 0 :$

ը. $u_{xx} + 2u_{xy} + 2u_{yy} - 2u_{yz} + u_{zz} = 0 :$

թ. $5u_{xx} + 4u_{xy} + u_{yy} - 4u_{yz} + 5u_{zz} - 8u_{xz} = 0 :$

Գ Լ ՈՒ Խ II

ՀԻՊԵՐԲՈԼԱԿԱՆ ՏԵՍԱԿԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ

§1. Հիպերբոլական տեսակի հավասարումների բերվող խնդիրներ

Ֆիզիկայի և մեխանիկայի շատ խնդիրներ բերվում են երկրորդ կարգի մասնակի ածանցյալներով հավասարումների ուսումնասիրման: Օրինակ, տատանողական երևույթների ուսումնասիրումը (դա լինի առաձգական, ձայնային, էլեկտրամագնիսական և այլ) բերվում են, այսպես կոչված, *տատանումների հավասարման*

$$\rho \frac{\partial^2 u}{\partial t^2} = \operatorname{div}(p \operatorname{grad} u) - qu + F(x, t), \quad (1)$$

որտեղ ρ , p , q գործակիցները նկարագրում են միջավայրի հատկությունները, իսկ $F(x, t)$ -ն արտաքին գրգռման ինտենսիվությունն է:

Մասնավորապես

$$\rho \frac{\partial^2 u}{\partial t^2} = T \frac{\partial^2 u}{\partial x^2} + F \quad (2)$$

հավասարումը նկարագրում է լարի փոքր լայնական տատանումները: Եթե $\rho = \operatorname{const}$, ապա

$$\frac{\partial^2 u}{\partial t^2} = a^2 \frac{\partial^2 u}{\partial x^2} + f, \quad f = \frac{F}{\rho}, \quad a^2 = \frac{T}{\rho} \quad (3)$$

հավասարումն անվանում են *միաչափ ալիքային հավասարում*:

(1) տեսքի հավասարումով է նկարագրվում նաև առաձգական ձողի փոքր երկայնական տատանումները

$$\rho S \frac{\partial^2 u}{\partial t^2} = \frac{\partial}{\partial x} \left(ES \frac{\partial u}{\partial x} \right) + F(x, t), \quad (4)$$

որտեղ $S(x)$ -ը ձողի լայնական հատույթի մակերեսն է, իսկ $E(x)$ -ը Յունգի մոդուլը:

Թաղանթի փոքր լայնական տատանումները նկարագրվում են

$$\rho \frac{\partial^2 u}{\partial t^2} = T \left(\frac{\partial^2 u}{\partial x^2} + \frac{\partial^2 u}{\partial y^2} \right) + F \quad (5)$$

հավասարումով: Եթե $\rho = const$, ապա (5)-ն անվանում են *երկչափ ալիքային հավասարում*:

Եռաչափ ալիքային հավասարումը

$$\frac{\partial^2 u}{\partial t^2} = a^2 \left(\frac{\partial^2 u}{\partial x^2} + \frac{\partial^2 u}{\partial y^2} + \frac{\partial^2 u}{\partial z^2} \right) + F \quad (6)$$

նկարագրում է, օրինակ, ծայնի տարածումը համասեռ միջավայրում և էլեկտրամագնիսական ալիքների տարածումը համասեռ ոչհաղորդիչ միջավայրում:

Ենթադրենք միջավայրում գոյություն ունի փոփոխական էլեկտրամագնիսական դաշտ: Նշանակենք $\mathbf{E}(x, t)$ -ով էլեկտրական դաշտի լարվածությունը, $\mathbf{H}(x, t)$ -ով մագնիսական դաշտի լարվածությունը, ε -ով և μ -ով դիէլեկտրիկ և մագնիսական թափանցելիությունները, $\rho(x)$ -ով լիցքերի խտությունը, $\mathbf{I}(x, t)$ -ով հաղորդականության հոսանքները: Այս մեծությունները բավարարում են *Մաքսվելի զծային հավասարումների համակարգին*

$$\begin{aligned} \operatorname{div}(\varepsilon \mathbf{E}) &= 4\pi\rho, \quad \operatorname{div}(\mu \mathbf{H}) = 0, \\ \operatorname{rot} \mathbf{E} &= -\frac{1}{c} \frac{\partial}{\partial t}(\mu \mathbf{H}), \\ \operatorname{rot} \mathbf{H} &= \frac{1}{c} \frac{\partial}{\partial t}(\varepsilon \mathbf{E}) + \frac{4\pi}{c} \mathbf{I}, \end{aligned}$$

որտեղ c -ն լույսի արագությունն է վակուումում:

m_0 զանգվածով ազատ ռելյատիվիստական մասնիկի $\varphi(x, t)$ ալիքային ֆունկցիան բավարարում է *Էլեյնի-Գորդոնի* հավասարմանը

$$\left(\frac{\partial^2}{\partial t^2} - \Delta + m_0^2 \right) \varphi = 0 :$$

հավասարմանը.

Տատանողական երևույթների լրիվ նկարագրության համար անհրաժեշտ է գիտենալ սկզբնական շեղումը և արագությունը (*սկզբնական պայմաններ*), իսկ եթե տատանվող միջավայրը սահմանափակ է, նաև *եզրային տվյալներ*։

Ֆիզիկայի որևէ խնդիր մաթեմատիկորեն ձևակերպելու համար անհրաժեշտ է

ա. ընտրել ֆիզիկական երևույթը նկարագրող ֆունկցիան,

բ. գրել այն դիֆերենցիալ հավասարումը, որին բավարարում է նշված ֆունկցիան,

գ. ձևակերպել սկզբնական և եզրային պայմանները։

Լուծել հետևյալ խնդիրները

11. Մաթեմատիկորեն ձևակերպել S հաստատուն կտրվածքով և l երկարությամբ համասեռ առաձգական ծողի երկայնական տատանման խնդիրը՝ կամայական սկզբնական շեղումների և արագությունների դեպքում, երբ

ա. ծողի ծայրերը կոշտ ամրացված են,

բ. ծողի ծայրերը ազատ են,

գ. ծողի $x = 0$ և $x = l$ ծայրերին սկսած $t = 0$ պահից կիրառված են x առանցքով ուղղված համապատասխանաբար $F(t)$ և $\Psi(t)$ ուժերը,

դ. ծողի ծայրերը առաձգական ձևով ամրացված են, այսինքն՝ իրենց շեղումներին համեմատական դիմադրություններ են կրում,

ե. ծողի $x = 0$ ծայրը կոշտ ամրացված է, իսկ $x = l$ ծայրը կրում է արագությամբ համեմատական դիմադրություն։

12. Համասեռ և առաձգական ծանր ծողի մի ծայրը կոշտ ամրացված է՝ ազատ անկում կատարող վերելակում, որը հասնելով v_0 արագության միանգամից կանգ է առնում։ Ձևակերպել ծողի փոքր երկայնական տատանումների խնդիրը։

13. Ձևակերպել համասեռ և առաձգական ծողի երկայնական տատանումների խնդիրը, եթե ծողը հանդիպում է արագությամբ համեմատական

դիմադրության: Չողի ծայրերը կոշտ ամրացված են, իսկ սկզբնական շեղումներն ու արագությունները կամայական են:

14. Ձևակերպել $S = S(x)$ փոփոխական լայնական հատույթով և l երկարությամբ համասեռ առաձգական ձողի երկայնական տատանումների խնդիրը, եթե սկզբնական պայմանները կամայական են: Դիտարկել հետևյալ դեպքերը

ա. ձողն ունի հատած կոնի ձև՝ կոշտ ամրացված հիմքերով,

բ. ձողի $x = 0$ ծայրը առաձգական ամրացված է, իսկ $x = l$ ծայրի միավոր մակերեսին կիրառված է $F(t)$ ուժ, որը ուղղված է ձողի երկայնքով:

15. Միևնույն S լայնական հատույթով երկու համասեռ առաձգական կիսաանվերջ ձողեր անմիջականորեն միացված են և կազմում են երկու կողմից անվերջ ձող: Ձևակերպել այդ ձողի երկայնական տատանումների խնդիրը, եթե ρ_1 , E_1 , ρ_2 , E_2 ձողերի խտություններն ու Յունգի մոդուլներն են: Չողերի լայնական հատույթների սկզբնական շեղումներն ու արագությունները համարել կամայական:

16. l երկարությամբ, համասեռ, գլանային ձողի $x = 0$ ծայրը ամրացված է, իսկ $x = l$ ծայրը ազատ է թողնված: $t = 0$ պահին M զանգվածով և v արագությամբ շարժվող բեռը հարվածում է ձողի ազատ ծայրին և կպնում է նրան: Ձևակերպել ձողի երկայնական տատանումների խնդիրը $t > 0$ պահին:

17. Ձևակերպել l երկարությամբ, $\rho = \rho(x)$ գծային խտությամբ և T լարումով լարի փոքր, լայնական տատանումների խնդիրը: Անտեսել ծանրության և դիմադրության ուժերը: Սկզբնական շեղումները և արագությունները համարել կամայական: Դիտարկել հետևյալ դեպքերը

ա. լարի ծայրերը առաձգականորեն ամրացված են,

բ. լարի ծայրերը ազատ են թողնված,

գ. լարի ծայրերին կիրառված են $F(t)$ և $\Phi(t)$ լայնական ուժեր:

18. l երկարությամբ և ρ հաստատուն խտությամբ առաձգական լարի ծայրերը կոշտ ամրացված են: Սկսած $t = 0$ պահից լարի վրա ազդում են հավասարաչափ բաշխված $F(x, t)$ գծային խտությամբ լայնական ուժեր:

Ձևակերպել $u(x, t)$ լայնական շեղումների որոշման եզրային խնդիրը $t > 0$ պահին:

19. Ձևակերպել լարի փոքր լայնական տատանումների եզրային խնդիրը, եթե տատանումները կատարվում են արագությամբ համեմատական դիմադրություն ունեցող միջավայրում: Լարի ծայրերը կոշտ ամրացված են:

20. Ձևակերպել l երկարությամբ համասեռ, բարակ հաղորդալարի փոփոխական հոսանքի ուժը և լարումը որոշելու եզրային խնդիրը՝ անընդհատ բաշխված R օհմական դիմադրությամբ, C ունակությամբ, L ինքնինդուկցիայով և G արտահոսքով, եթե լարի մի ծայրը հողակցված է, իսկ մյուսին կիրառված է $F(t)$ էլեկտրաշարժիչ ուժ: Տրված են նաև $i(x, 0) = f(x)$ և $v(x, 0) = F(x)$ սկզբնական հոսանքը և լարումը:

21. l երկարությամբ, առաձգական, համասեռ գլանի լայնական հատույթները $t = 0$ պահին ստացել են փոքր պտույտներ: Լայնական հատույթները մնում են հարթ և չեն դեֆորմացվում պտտվելով գլանի առանցքի շուրջ: Ձևակերպել լայնական հատույթների պտույտի անկյան որոշման եզրային խնդիրը $t > 0$ պահին: Դիտարկել

ա. ազատ թողնված,

բ. կոշտ ամրացված,

գ. առաձգական ամրացված

ծայրերի դեպքերը:

22. Համասեռ թաղանթը դադարի վիճակում համընկնում է (x, y) հարթության D տիրույթի հետ, որի եզրը L -ն է, ρ -ն նրա մակերևութային խտությունն է, T -ն լարումը, $\varphi(x, y)$ -ը և $\psi(x, y)$ -ը թաղանթի (x, y) կետի սկզբնական շեղումը և արագությունն են: Ձևակերպել այդպիսի թաղանթի փոքր, լայնական տատանումների եզրային խնդիրը: Անտեսել ծանրության ուժը: Դիտարկել հետևյալ դեպքերը

ա. թաղանթի եզրը կոշտ ամրացված է,

բ. թաղանթի եզրը ազատ է թողնված,

գ. թաղանթի եզրին կիրառված է $F(x, y, t)$ ($(x, y) \in L$) լայնական

ուժը,

դ. թաղանթի եզրը առաձգականորեն ամրացված է,

ե. թաղանթի եզրը կոշտ ամրացված է, իսկ թաղանթի վրա ազդում է $F(x, y, t)$ լայնական ուժը,

զ. թաղանթի եզրը կոշտ ամրացված է, իսկ տատանումները կատարվում են այնպիսի միջավայրում, որը շեղմանը համեմատական դիմադրություն է ցույց տալիս:

§2. Եզրային և Կոշիի խնդիրներ

Տատանողական պրոցեսները, որոշ սահմանափակումների դեպքում, նկարագրվում են

$$\sum_{i=1}^n u_{x_i x_i} - u_{tt} = 0 \quad (1)$$

հավասարումով: (1) հավասարման լուծումը ընդունված է անվանել *ալիք*, իսկ ինքը հավասարումը՝ *ալիքային*:

Քանի որ (1) հավասարմանը համապատասխանող $Q(\lambda)$ քառակուսային ձևն ունի

$$Q(\lambda) = \sum_{i=1}^n \lambda_i^2 - \lambda_{n+1}^2$$

տեսքը, ապա այն հիպերբոլական տեսակի հավասարում է:

Ալիքային տեսության մեջ ամենակարևոր խնդիրներից մեկը *Կոշիի խնդիրն* է: Այն կայանում է հետևյալում.

գտնել (1) հավասարման $u(x, t)$ այնպիսի լուծում, որը բավարարի հետևյալ սկզբնական պայմաններին

$$u(x, 0) = \varphi(x), \quad u_t(x, 0) = \psi(x), \quad (2)$$

որտեղ φ և ψ -ն նախապես տրված ֆունկցիաներ են $x_1, \dots, x_n$ փոփոխականներից:

Դիտարկենք Կոշիի խնդրի հետևյալ պարզագույն դեպքը ($n = 1$)

$$\begin{aligned} u_{tt} &= a^2 u_{xx} + f(x, t), \quad t > 0, \quad -\infty < x < \infty, \\ u(x, 0) &= \varphi(x), \quad u_t(x, 0) = \psi(x), \quad -\infty < x < \infty : \end{aligned} \quad (3)$$

$f(x, t) \equiv 0$ դեպքում (3) խնդրի լուծումը տրվում է *Դալամբերի բանաձևով*

$$u(x, t) = \frac{\varphi(x - at) + \varphi(x + at)}{2} + \frac{1}{2a} \int_{x-at}^{x+at} \psi(z) dz : \quad (4)$$

Ընդհանուր դեպքում ($f(x, t) \neq 0$) (3) խնդրի լուծումը կարելի է կառուցել *Դյուլամբելի եղանակով*: Համառոտ նկարագրենք այն: Դիցուք $v(x, t, \tau)$ ֆունկցիան հետևյալ խնդրի լուծումն է

$$\begin{aligned} v_{tt} &= a^2 v_{xx}, \quad t > 0, \quad -\infty < x < \infty, \\ v(x, \tau, \tau) &= 0, \quad v_t(x, \tau, \tau) = f(x, \tau), \quad -\infty < x < \infty, \end{aligned} \quad (5)$$

որտեղ τ -ն որևէ դրական պարամետր է: Այդ դեպքում

$$u(x, t) = \int_0^t v(x, t, \tau) d\tau \quad (6)$$

ֆունկցիան (3) խնդրի լուծումն է: $v(x, t, \tau)$ ֆունկցիան կարելի է կառուցել Դալամբերի բանաձևի օգնությամբ:

Կոշիի խնդրի լուծումը $n = 2$ դեպքում տրվում է *Պուասոնի բանաձևով*

$$\begin{aligned} u(x_1, x_2, t) &= \frac{1}{2\pi} \int_{K_t} \frac{\psi(y_1, y_2) dy_1 dy_2}{\sqrt{t^2 - (y_1 - x_1)^2 - (y_2 - x_2)^2}} + \\ &+ \frac{1}{2\pi} \frac{\partial}{\partial t} \int_{K_t} \frac{\varphi(y_1, y_2) dy_1 dy_2}{\sqrt{t^2 - (y_1 - x_1)^2 - (y_2 - x_2)^2}}, \end{aligned}$$

որտեղ K_t -ն $(y_1 - x_1)^2 + (y_2 - x_2)^2 \leq t^2$ շրջանն է:

Կոշիի խնդրի լուծումը $n = 3$ դեպքում տրվում է *Կիրիստոֆի բանաձևով*

$$u(x_1, x_2, x_3, t) = \frac{1}{4\pi} \int_{S_t} \frac{\psi(y_1, y_2, y_3)}{t} d\sigma + \\ + \frac{1}{4\pi} \frac{\partial}{\partial t} \int_{S_t} \frac{\varphi(y_1, y_2, y_3)}{t} d\sigma,$$

որտեղ S_t -ն $(y_1 - x_1)^2 + (y_2 - x_2)^2 + (y_3 - x_3)^2 = t^2$ սֆերան է :

23. Լուծել Կոշիի խնդիրները

ա. $u_{xx} + 2u_{xy} - 3u_{yy} = 0$, $u(x, 0) = 3x^2$, $u_y(x, 0) = 0$:

բ. $u_{xx} - u_{yy} + 5u_x + 3u_y + 4u = 0$,
 $u(x, 0) = xe^{-\frac{5}{2}x-x^2}$, $u_y(x, 0) = e^{-\frac{5}{2}x}$:

գ. $u_{xx} - 6u_{xy} + 5u_{yy} = 0$, $u(x, x) = \sin x$, $u_y(x, x) = \cos x$:

դ. $u_{xx} - 2\cos x u_{xy} - \sin^2 x u_{yy} + u_x + (1 + \cos x - \sin x)u_y = 0$,
 $u(x, \sin x) = \cos x$, $u_y(x, \sin x) = \sin x$:

ե. $4y^2 u_{xx} + 2(1 - y^2)u_{xy} - u_{yy} - \frac{2y}{1 + y^2}(2u_x - u_y) = 0$,
 $u(x, 0) = x^2$, $u_y(x, 0) = x \sin x$:

զ. $u_{xx} - 2u_{xy} + 4e^y = 0$, $u(0, y) = 2ye^y$, $u_x(0, y) = 2e^y$:

է. $u_{xx} + 2\cos x u_{xy} - \sin^2 x u_{yy} - \sin x u_y = 0$,
 $u(x, \sin x) = x + \cos x$, $u_y(x, \sin x) = \sin x$:

ը. $u_{xx} + 2\sin x u_{xy} - \cos^2 x u_{yy} + u_x + (\sin x + \cos x + 1)u_y = 0$,
 $u(x, -\cos x) = 1 + 2\sin x$, $u_y(x, -\cos x) = \sin x$:

թ. $3u_{xx} - 4u_{xy} + u_{yy} - 3u_x + u_y = 0$,
 $u(x, 0) = x + xe^{-\frac{x}{2}}$, $u_y(x, 0) = e^{-\frac{x}{2}}$:

ժ. $u_{xx} - 2\cos x u_{xy} - (3 + \sin^2 x)u_{yy} + u_x + (\sin x - \cos x - 2)u_y = 0$,
 $u(x, -\sin x) = 0$, $u_y(x, -\sin x) = e^{-\frac{x}{2}} \sin x$:

ի. $e^{-2x}u_{xx} - e^{-2y}u_{yy} - e^{-2x}u_x + e^{-2y}u_y + 8e^y = 0$,
 $u(x, 0) = 1 - e^{2x}$, $u_y(x, 0) = 3$:

$$l. e^y u_{xy} - u_{yy} + u_y = 0, \quad u(x, 0) = -\frac{x^2}{2}, \quad u_y(x, 0) = -\sin x :$$

$$ju. u_{xx} - 2 \sin x u_{xy} - (3 + \cos^2 x) u_{yy} - \cos x u_y = 0,$$

$$u(x, \cos x) = \sin x, \quad u_y(x, \cos x) = e^{\frac{x}{2}} :$$

$$d. 2u_{xx} - 5u_{xy} + 3u_{yy} = 0, \quad u(x, 0) = 0, \quad u_y(x, 0) = -e^{3x} :$$

$$4. 2u_{xx} + 6u_{xy} + 4u_{yy} + u_x + u_y = 0,$$

$$u(0, y) = 0, \quad u_x(0, y) = -e^{-\frac{y}{2}} :$$

24. Ցույց տալ, որ

$$u(x, t) = \sum_{k=0}^{\infty} \left(\frac{t^{2k}}{(2k)!} \Delta^k \mu(x_1, \dots, x_n) + \frac{t^{2k+1}}{(2k+1)!} \Delta^k \nu(x_1, \dots, x_n) \right) \quad (7)$$

Ֆունկցիան հանդիսանում է (1) հավասարման լուծում, եթե μ և ν ֆունկցիաները անվերջ դիֆերենցելի են, իսկ (7) շարքը կարելի է երկու անգամ անդամ-առ-անդամ ածանցել: Δ -ն Լապլասի օպերատորն է $x_1, \dots, x_n$ փոփոխականներից:

25. Օգտվելով (7) բանաձևից լուծել Կոշիի խնդիրները՝ (1) հավասարման համար, եթե

$$ա. u(x, 0) = x_1^3 x_2^2, \quad u_t(x, 0) = x_1^2 x_2^4 - 3x_1^3 :$$

$$բ. u(x, 0) = x_1 x_2 x_3, \quad u_t(x, 0) = x_1^2 x_2^2 x_3^2 :$$

$$գ. u(x, 0) = x_1^2 + x_2^2 + x_3^2, \quad u_t(x, 0) = x_1 x_2 :$$

$$դ. u(x, 0) = e^{x_1} \cos x_2, \quad u_t(x, 0) = x_1^2 - x_2^2 :$$

$$ե. u(x, 0) = x_1^2 + x_2^2, \quad u_t(x, 0) = 1 :$$

$$զ. u(x, 0) = e^{x_1}, \quad u_t(x, 0) = e^{-x_1} :$$

$$է. u(x, 0) = \frac{1}{x_1}, \quad u_t(x, 0) = 0, \quad x_1 \neq 0, \quad x_1^2 \neq t^2 :$$

26. Ցույց տալ, որ

$$u(x, t, \tau) = \sum_{k=0}^{\infty} \left(\frac{(t - \tau)^{2k}}{(2k)!} \Delta^k \mu(x_1, \dots, x_n, \tau) + \frac{(t - \tau)^{2k+1}}{(2k+1)!} \Delta^k \nu(x_1, \dots, x_n, \tau) \right) \quad (8)$$

ֆունկցիան, որտեղ Δ -ն Լապլասի օպերատորն է $x_1, \dots, x_n$ փոփոխականներից, իսկ μ և ν ֆունկցիաները անվերջ դիֆերենցելի են, հանդիսանում է

$$u_{tt} = \Delta u$$

$$u(x, \tau, \tau) = \mu(x, \tau), \quad u_t(x, \tau, \tau) = \nu(x, \tau)$$

խնդրի լուծում, եթե (8) շարքը կարելի է երկու անգամ անդամ-առ-անդամ ածանցել:

27. Օգտվելով (7) և (8) բանաձևերից լուծել Կոշիի խնդիրները

ա. $u_{tt} = \Delta u + ax + bt$, $u(x, y, z, 0) = xyz$, $u_t(x, y, z, 0) = xy + z$:

բ. $u_{tt} = \Delta u + \frac{x}{1+t^2} e^y \cos z$,

$$u(x, y, z, 0) = z \sin(\sqrt{2}(x+y)), \quad u_t(x, y, z, 0) = 0 :$$

գ. $u_{tt} = \Delta u + \frac{xt}{1+t^2}$,

$$u(x, y, z, 0) = x \sin y, \quad u_t(x, y, z, 0) = y \cos z :$$

դ. $u_{tt} = \Delta u + txy \sin az$,

$$u(x, y, z, 0) = az + bxy, \quad u_t(x, y, z, 0) = 0 :$$

ե. $u_{tt} = \Delta u + axyze^{-bt}$, $u(x, y, z, 0) = 2xy$,

$$u_t(x, y, z, 0) = x \sin(\sqrt{2}y) \cos(\sqrt{2}z) :$$

զ. $u_{tt} = \Delta u + axyz \sin bt$, $u(x, y, z, 0) = x^2 y z^2$,

$$u_t(x, y, z, 0) = y \sin \omega x e^{\omega z} :$$

է. $u_{tt} = \Delta u + xyz \ln(1+t^2)$,

$$u(x, y, z, 0) = ye^x \sin z, \quad u_t(x, y, z, 0) = xz \sin y :$$

$$\text{ը. } u_{tt} = \Delta u + \frac{ayzt^3}{1+t^2}, \quad u(x, y, z, 0) = xe^y, \quad u_t(x, y, z, 0) = ye^z :$$

$$\text{բ. } u_{tt} = u_{xx} + u_{yy} - xyt, \quad u(x, y, 0) = 0, \quad u_t(x, y, 0) = xy :$$

$$\text{ժ. } u_{tt} = \Delta u - xyt,$$

$$u(x, y, z, 0) = \varphi(x, y, z), \quad u_t(x, y, z, 0) = \psi(x, y, z) :$$

$$\text{ի. } u_{tt} = \Delta u + f(x, y, z), \quad u(x, y, z, 0) = \varphi(x, y, z),$$

$$u_t(x, y, 0) = \psi(x, y, z), \quad \Delta \varphi = 0, \quad \Delta \psi = 0 :$$

$$\text{լ. } u_{tt} = \Delta u + f(x, y, z)g(t), \quad u(x, y, z, 0) = \varphi(x, y, z),$$

$$u_t(x, y, 0) = \psi(x, y, z), \quad \Delta f = 0,$$

$$\Delta \varphi = 0, \quad \Delta \psi = 0, \quad g \in C^1(t \geq 0) :$$

28. Օգտվելով Դալամբերի բանաձևից և Դյուամենլի եղանակից, լուծել

Կոշիի խնդիրները

$$\text{ա. } u_{tt} = u_{xx} + bx^2, \quad u(x, 0) = e^{-x}, \quad u_t(x, 0) = c \cos x :$$

$$\text{բ. } u_{tt} = u_{xx} + ax^2, \quad u(x, 0) = x, \quad u_t(x, 0) = \sin x :$$

$$\text{գ. } u_{tt} = u_{xx} + ae^{-t}, \quad u(x, 0) = b \sin x, \quad u_t(x, 0) = c \cos x :$$

$$\text{դ. } u_{tt} = u_{xx} + a \sin bt, \quad u(x, 0) = \cos x, \quad u_t(x, 0) = \sin x :$$

$$\text{ե. } u_{tt} = u_{xx} + x \sin t, \quad u(x, 0) = \sin x, \quad u_t(x, 0) = \cos x :$$

29. Օգտվելով

$$u_{tt} = a^2 u_{xx}, \quad -\infty < x < \infty, \quad t > 0,$$

$$u(x, 0) = \varphi(x), \quad u_t(x, 0) = \psi(x), \quad -\infty < x < \infty$$

խնդրի $u(x, t)$ լուծման Դալամբերի բանաձևից՝ ցույց տալ, որ

$$\text{ա. եթե } \varphi(x) \text{ և } \psi(x) \text{ ֆունկցիաները կենտ են, ապա } u(0, t) = 0,$$

$$\text{բ. եթե } \varphi(x) \text{ և } \psi(x) \text{ ֆունկցիաները զույգ են, ապա } u_x(0, t) = 0 :$$

30. Ստուգել, որ

$$u_{tt} = a^2 u_{xx} + f(x, t), \quad -\infty < x < \infty, \quad t > 0,$$

$$u(x, 0) = 0, \quad u_t(x, 0) = 0, \quad -\infty < x < \infty$$

Կոշիի խնդրի լուծումը բավարարում է հետևյալ հատկություններին՝

ա. $u(0, t) = 0$, եթե $f(x, t)$ ֆունկցիան կենտ է x փոփոխականի նկատմամբ,

բ. $u_x(0, t) = 0$, եթե $f(x, t)$ ֆունկցիան զույգ է x փոփոխականի նկատմամբ:

31. Օգտվելով 29 և 30 խնդիրների պնդումներից, լուծել հետևյալ եզրային խնդիրները՝ տվյալները համապատասխան ձևով շարունակելով ամբողջ թվային առանցքի վրա

ա. $u_{tt} = a^2 u_{xx}$, $x > 0$, $t > 0$,

$$u(0, t) = 0, \quad t > 0,$$

$$u(x, 0) = \sin x, \quad u_t(x, 0) = x^2, \quad x > 0 :$$

բ. $u_{tt} = a^2 u_{xx}$, $x > 0$, $t > 0$,

$$u(0, t) = 0, \quad t > 0,$$

$$u(x, 0) = 1 - e^x, \quad u_t(x, 0) = shx, \quad x > 0 :$$

գ. $u_{tt} = a^2 u_{xx}$, $x > 0$, $t > 0$,

$$u_x(0, t) = 0, \quad t > 0,$$

$$u(x, 0) = x - e^x, \quad u_t(x, 0) = x^2, \quad x > 0 :$$

դ. $u_{tt} = a^2 u_{xx}$, $x > 0$, $t > 0$,

$$u_x(0, t) = 0, \quad t > 0,$$

$$u(x, 0) = 1 + x^3, \quad u_t(x, 0) = x^2 e^{6x}, \quad x > 0 :$$

ե. $u_{tt} = a^2 u_{xx} + e^x \cos t$, $x > 0$, $t > 0$,

$$u(0, t) = u(x, 0) = u_t(x, 0) = 0, \quad t > 0, \quad x > 0,$$

զ. $u_{tt} = a^2 u_{xx} + t \cos x$, $x > 0$, $t > 0$,

$$u(0, t) = u(x, 0) = u_t(x, 0) = 0, \quad x > 0, \quad t > 0 :$$

է. $u_{tt} = a^2 u_{xx} + \sin x \sin t$, $x > 0$, $t > 0$,

$$u_x(0, t) = u(x, 0) = u_t(x, 0) = 0, \quad x > 0, \quad t > 0 :$$

ը. $u_{tt} = a^2 u_{xx} + te^x$, $x > 0$, $t > 0$,

$$u_x(0, t) = u(x, 0) = u_t(x, 0) = 0, \quad x > 0, \quad t > 0 :$$

թ. $u_{tt} = a^2 u_{xx} + chxcht$, $x > 0$, $t > 0$,

$$u(0, t) = 0, \quad t > 0,$$

$$u(x, 0) = shx, \quad u_t(x, 0) = chx, \quad x > 0 :$$

ժ. $u_{tt} = a^2 u_{xx} + t \cos x$, $x > 0$, $t > 0$,

$$u(0, t) = 0, \quad t > 0,$$

$$u(x, 0) = x, \quad u_t(x, 0) = x^2, \quad x > 0 :$$

$$\text{h. } u_{tt} = a^2 u_{xx} + \sin x \sin t, \quad x > 0, \quad t > 0,$$

$$u_x(0, t) = 0, \quad t > 0,$$

$$u(x, 0) = \cos x, \quad u_t(x, 0) = x^2, \quad x > 0 :$$

$$\text{լ. } u_{tt} = a^2 u_{xx} + x e^t, \quad x > 0, \quad t > 0,$$

$$u_x(0, t) = 0, \quad t > 0,$$

$$u(x, 0) = \cos x, \quad u_t(x, 0) = x - e^x, \quad x > 0 :$$

32. Հետևյալ խնդիրներում լուծումը փնտրել $u(x, t) = f(x - at)$

տեսքով

$$\text{ա. } u_{tt} = a^2 u_{xx}, \quad x > 0, \quad t > 0,$$

$$u(0, t) = \mu(t), \quad t > 0,$$

$$u(x, 0) = u_t(x, 0) = 0, \quad x > 0 :$$

$$\text{բ. } u_{tt} = a^2 u_{xx}, \quad x > 0, \quad t > 0,$$

$$u_x(0, t) = 0, \quad t > 0,$$

$$u(x, 0) = 0, \quad x > 0,$$

$$u_t(x, 0) = \begin{cases} 0, & 0 < x < c \\ v_0, & c < x < 2c \\ 0, & 2c < x \end{cases}$$

$$\text{գ. } u_{tt} = a^2 u_{xx}, \quad x > 0, \quad t > 0,$$

$$u_x(0, t) = \nu(t), \quad t > 0,$$

$$u(x, 0) = u_t(x, 0) = 0, \quad x > 0:$$

$$\text{դ. } u_{tt} = a^2 u_{xx}, \quad x > 0, \quad t > 0,$$

$$u_x(0, t) - h u(0, t) = \chi(t), \quad t > 0, \quad h > 0$$

$$u(x, 0) = u_t(x, 0) = 0, \quad x > 0:$$

$$\text{ե. } u_{tt} = a^2 u_{xx}, \quad x > 0, \quad t > 0,$$

$$u_x(0, t) + h u_t(0, t) = 0, \quad t > 0,$$

$$u(x, 0) = u_t(x, 0) = \omega, \quad x > 0:$$

$$\text{զ. } u_{tt} = a^2 u_{xx}, \quad x > 0, \quad t > 0,$$

- $u(0, t) = 0, \quad t > 0,$
 $u(x, 0) = f(x), \quad u_t(x, 0) = af'(x), \quad x > 0:$
- ե.** $u_{tt} = a^2 u_{xx}, \quad x > 0, \quad t > 0,$
 $u_x(0, t) = 0, \quad t > 0,$
 $u(x, 0) = f(x), \quad u_t(x, 0) = af'(x), \quad x > 0:$
- ը.** $u_{tt} = a^2 u_{xx}, \quad x > 0, \quad t > 0,$
 $u_x(0, t) - hu(0, t) = 0, \quad t > 0,$
 $u(x, 0) = f(x), \quad u_t(x, 0) = af'(x), \quad x > 0:$
- թ.** $u_{tt} = a^2 u_{xx}, \quad x > 0, \quad t > 0,$
 $u_x(0, t) + hu_t(0, t) = 0, \quad t > 0,$
 $u(x, 0) = f(x), \quad u_t(x, 0) = af'(x), \quad x > 0:$
- ժ.** $u_{tt} = a^2 u_{xx}, \quad x > 0, \quad t > 0,$
 $u_x(0, t) - hu(0, t) = 0, \quad t > 0,$
 $u_t(x, 0) = 0, \quad x > 0,$
 $u(x, 0) = \begin{cases} \sin \frac{\pi x}{l}, & 0 < x < l \\ 0, & l < x \end{cases}:$
- ի.** $u_{tt} = a^2 u_{xx}, \quad 0 \leq x \leq l, \quad t > 0,$
 $u(0, t) = u(l, t) = 0, \quad t > 0,$
 $u(x, 0) = A \sin \frac{\pi x}{l}, \quad u_t(x, 0) = 0, \quad 0 \leq x \leq l:$
- լ.** $u_{tt} = a^2 u_{xx}, \quad 0 \leq x \leq l, \quad t > 0,$
 $u(0, t) = u_x(l, t) = 0, \quad t > 0,$
 $u(x, 0) = Ax, \quad u_t(x, 0) = 0, \quad 0 \leq x \leq l:$
- խ.** $u_{tt} = a^2 u_{xx}, \quad 0 \leq x \leq l, \quad t > 0,$
 $u_x(0, t) = u_x(l, t) = 0, \quad t > 0,$
 $u(x, 0) = \cos \frac{\pi x}{l}, \quad u_t(x, 0) = 0, \quad 0 \leq x \leq l:$
- ծ.** $u_{tt} = a^2 u_{xx}, \quad 0 \leq x \leq l, \quad t > 0,$
 $u(0, t) = 0, \quad ml u_{tt}(l, t) = -a^2 u_x(l, t), \quad t > 0,$
 $u(x, 0) = u_t(x, 0) = 0, \quad 0 \leq x \leq l, \quad u_t(l, 0) = -v:$

33. Լուծել եզրային խնդիրները

- ա.** $u_{tt} = a^2 u_{xx} + x \cos t, \quad x > 0, \quad t > 0,$

$$u(0, t) = \sin t, \quad t > 0,$$

$$u(x, 0) = \sin 2x, \quad u_t(x, 0) = e^x, \quad x > 0:$$

բ. $u_{tt} = a^2 u_{xx} + xt, \quad x > 0, \quad t > 0,$

$$u(0, t) = t, \quad t > 0,$$

$$u(x, 0) = shx, \quad u_t(x, 0) = chx, \quad x > 0:$$

գ. $u_{tt} = a^2 u_{xx} + t \cos x, \quad x > 0, \quad t > 0,$

$$u_x(0, t) = sh t, \quad t > 0,$$

$$u(x, 0) = \cos x, \quad u_t(x, 0) = \sin x, \quad x > 0:$$

34. Գտնել $u_{xx} + u_{yy} + u_{zz} = u_{tt}$ հավասարման ընդհանուր լուծումը, եթե u ֆունկցիան կախված է միայն r ($r^2 = x^2 + y^2 + z^2$) և t փոփոխականներից:

35. Լուծել հետևյալ խնդիրը

$$u_{tt} = a^2 \Delta u, \quad -\infty < x, y, z < +\infty, \quad t > 0,$$

$$u(r, 0) = \varphi(r), \quad u_t(r, 0) = \psi(r), \quad r^2 = x^2 + y^2 + z^2, \quad 0 \leq r,$$

և գտնել $\lim_{x, y, z \rightarrow 0} u(x, y, z, t)$:

36. Լուծել

$$u_{tt} = a^2 \Delta u + f(r, t), \quad 0 \leq r < +\infty, \quad t > 0,$$

$$u(r, 0) = 0, \quad u_t(r, 0) = 0, \quad r^2 = x^2 + y^2 + z^2, \quad 0 \leq r,$$

խնդիրը:

37. Լուծել

$$u_{tt} = a^2 \Delta u, \quad -\infty < x, y, z < +\infty, \quad t > 0,$$

խնդիրը, հետևյալ սկզբնական պայմանների դեպքում

$$\text{ա. } u(r, 0) = \begin{cases} u_0, & r \leq r_0 \\ 0, & r > r_0 \end{cases},$$

$$u_t(r, 0) = 0:$$

$$\text{բ. } u_t(r, 0) = \begin{cases} u_0, & r \leq r_0 \\ 0, & r > r_0 \end{cases},$$

$$u(r, 0) = 0:$$

§3. Գուրսայի խնդիրը և նրա լուծումը: Ռիմանի ֆունկցիան:
Կոշիի խնդրի ընդհանուր դրվածքը և նրա լուծումը
Ռիմանի եղանակով

Դիտարկենք կանոնական տեսքի բերված երկու անկախ փոփոխականներով գծային հիպերբոլական տեսակի հետևյալ հավասարումը

$$u_{xy} + a(x, y)u_x + b(x, y)u_y + c(x, y)u = f(x, y), \quad (1)$$

որտեղ a, b, c և f -ը $D = (0, x_0) \times (0, y_0)$ ուղղանկյան $\overline{D}$ փակման վրա տրված անընդհատ ֆունկցիաներ են:

Գուրսայի խնդիրը. Պահանջվում է $C^2(D) \cap C^1(\overline{D})$ դասում գտնել այն $u(x, y)$ ֆունկցիան, որը բավարարի (1) հավասարմանը D ուղղանկյան մեջ և ընդունի նրա $y = 0, 0 \leq x \leq x_0$ և $x = 0, 0 \leq y \leq y_0$ կողմերի վրա տրված արժեքները:

$$u(x, 0) = \varphi_1(x), \quad u(0, y) = \varphi_2(y) : \quad (2)$$

Ենթադրենք նաև, որ $\varphi_1 \in C^1[0, x_0], \varphi_2 \in C[0, y_0]$ և $\varphi_1(0) = \varphi_2(0)$:

Թեորեմ: Եթե a, b, c և f ֆունկցիաներն անընդհատ են D -ի փակման վրա, $\varphi_1 \in C^1[0, x_0], \varphi_2 \in C[0, y_0]$ և $\varphi_1(0) = \varphi_2(0)$, ապա (1)-(2) Գուրսայի խնդիրը շիտակ է դրված:

Այժմ դիտարկենք հետևյալ դիֆերենցիալ արտահայտությունը

$$L(u) = u_{xy} + au_x + bu_y + cu : \quad (3)$$

Այս արտահայտության *համալուծ դիֆերենցիալ արտահայտություն* անվանում են

$$L^*(v) = v_{xy} - (av)_x - (bv)_y + cv : \quad (4)$$

Սահմանում: $R(x, y; \xi, \eta)$ ֆունկցիան կոչվում է L դիֆերենցիալ արտահայտության Ռիմանի ֆունկցիա, եթե այն բավարարում է

$$L^*(R) = 0 \quad (5)$$

հավասարմանը և $x = \xi$ ու $y = \eta$ բնութագրիչների վրա

$$R(\xi, y; \xi, \eta) = e^{\int_{\eta}^y a(\xi, y') dy'}, \quad R(x, \eta; \xi, \eta) = e^{\int_{\xi}^x a(x', \eta) dx'} \quad (6)$$

— պայմաններին:

$R(x, y; \xi, \eta)$ -ի մեջ (x, y) կետը արգումենտի դեր է կատարում, իսկ (ξ, η) կետը պարամետրի: (6) պայմաններից անմիջապես ստանում ենք

$$R(\xi, y; \xi, \eta) = 1,$$

$$R_y(\xi, y; \xi, \eta) = a(\xi, y)R(\xi, y; \xi, \eta),$$

$$R_x(x, \eta; \xi, \eta) = b(x, \eta)R(x, \eta; \xi, \eta) :$$

Վերը նշված թեորեմից հետևում է՝ Ռիմանի ֆունկցիայի գոյությունը և միակությունը, որպես (5)-(6) Գուրսայի խնդրի լուծում: Եթե L օպերատորն ինքնահամալուծ օպերատոր է, ապա Ռիմանի ֆունկցիան սիմետրիկ է՝

$$R(x, y; \xi, \eta) = R(\xi, \eta; x, y) :$$

Դիցուք ℓ -ը (x, y) հարթության մեջ ողորկ կորի մի աղեղ է, որն ունի հետևյալ հատկությունները՝

ա. ℓ -ը (1) հավասարման ամեն մի $x = const, y = const$ բնութագրիչների հետ հատվում է միայն մեկ կետում:

բ. ℓ -ի ցանկացած կետում տարած շոշափողը չունի (1) հավասարման բնութագրիչի ուղղություն:

Այսպիսի կորի հավասարումը կարելի է գրել և $y = g(x)$ և $x = h(y)$ տեսքերով:

Կոշիի խնդիրը դրվում է հետևյալ կերպ. պահանջվում է գտնել (1) հավասարման այնպիսի $u(x, y)$ լուծում (ℓ կորի շրջակայքում), որը բավարարի ℓ կորի վրա հետևյալ պայմաններին

$$u|_{\ell} = \varphi_0, \quad u_y|_{\ell} = \varphi_1, \quad (7)$$

որտեղ φ_0 և φ_1 -ը ℓ կորի վրա տրված ֆունկցիաներ են, համապատասխանաբար C^2 և C^1 դասերից:

(7) պայմանները հնարավորություն են տալիս գտնելու u_x ածանցյալը ℓ կորի կետերում: Հետևապես, u_y ածանցյալի փոխարեն ℓ կորի վրա կարելի է տալ u_x ածանցյալը: Եվ ընդհանրապես, (7)-ի երկրորդ պայմանի փոխարեն կարելի է ℓ կորի կետերում տալ u -ի ածանցյալը ըստ որևէ ուղղության, որը չի համընկնում շոշափողի ուղղության հետ:

Կոշիի խնդրի լուծման Ռիմանի եղանակը կայանում է հետևյալում.

Թեորեմ: Եթե a, b, c, a_x, b_y, f ֆունկցիաներն անընդհատ են $\overline{D}$: $x_1 \leq \xi \leq x_2, y_1 \leq \eta \leq y_2$ ուղղանկյան վրա, $\varphi_0 \in C^2[x_1, x_2]$ և $\varphi_1 \in C^1[x_1, x_2]$, ապա (1) և (7) Կոշիի խնդրի լուծումը $C^1(\overline{D})$ դասում գոյություն ունի, միակն է և արտահայտվում է Ռիմանի հետևյալ բանաձևով

$$\begin{aligned} u(x, y) = & \frac{1}{2}\varphi_0(h(y))R(h(y), y; x, y) + \frac{1}{2}\varphi_0(x)R(x, g(x); x, y) + \\ & + \int_{l_{xy}} \left[\left(\frac{R}{2}\omega - \frac{\varphi_0}{2}R_{\xi} + b\varphi_0R \right) d\xi - \right. \\ & \left. - \left(\frac{R}{2}\varphi_1 - \frac{\varphi_0}{2}R_{\eta} + a\varphi_0R \right) d\eta \right] + \int_{G_{xy}} Rf d\xi d\eta, \end{aligned}$$

որտեղ G_{xy} -ը և l_{xy} -ը $\xi = x, \eta = y; \xi = x' = h(y), \eta = y' = g(x)$ բնութագրիչների միջև ընկած G տիրույթի և ℓ կորի համապատասխան մասերն են, իսկ $\omega(x) = \varphi_0'(x) - \varphi_1(x)g'(x)$:

38. Գտնել

$$L(u) = u_{tt} - a^2 u_{xx}, \quad a = \text{const}$$

օպերատորի Ռիմանի ֆունկցիան և նրա օգնությամբ լուծել

$$u_{tt} = a^2 u_{xx} + f(x, t), \quad -\infty < x < \infty, \quad t > 0,$$

$$u(x, 0) = \varphi(x), \quad u_t(x, 0) = \psi(x)$$

խնդիրը:

39. Գտնել

$$L(u) = u_{tt} - a^2 u_{xx} \pm c^2 u, \quad a = \text{const}$$

օպերատորի Ռիմանի ֆունկցիան և նրա օգնությամբ լուծել

$$u_{tt} = a^2 u_{xx} \pm c^2 u + f(x, t), \quad -\infty < x < \infty, \quad t > 0,$$

$$u(x, 0) = \varphi(x), \quad u_t(x, 0) = \psi(x)$$

խնդիրը:

40. Լուծել

$$x^2 u_{xx} - y^2 u_{yy} = 0, \quad -\infty < x < \infty, \quad 1 < y < \infty,$$

$$u(x, 1) = \varphi(x), \quad u_y(x, 1) = \psi(x)$$

խնդիրը:

41. Հետևյալ հավասարումների համար լուծել Կոշիի

$$u(0, t) = \varphi(t), \quad u_x(0, t) = \psi(t)$$

և Գուրսայի

$$u(x, x) = \varphi(x), \quad u(x, -x) = \psi(x), \quad x \geq 0, \quad \varphi(0) = \psi(0)$$

խնդիրները:

ա. $u_{xx} - u_{tt} + au_x + \frac{a^2}{4}u = 0, \quad a = \text{const} :$

բ. $u_{xx} - u_{tt} + bu_t - \frac{b^2}{4}u = 0, \quad b = \text{const} :$

գ. $u_{xx} - u_{tt} + au_x + bu_t + \frac{a^2}{4}u - \frac{b^2}{4}u = 0,$
 $a = \text{const}, \quad b = \text{const} :$

42. Լուծել 41 խնդրի ա,բ,գ հավասարումները

$$u(x, 0) = \varphi(x), \quad u(x, x) = \psi(x), \quad \varphi(0) = \psi(0)$$

պայմաններով:

43. Գտնել

$$\begin{cases} u_x - v_y = 0, \\ u_y - v_x = 0, \end{cases}$$

հավասարումների համակարգի այն լուծումը, որի համար

ա. $u(x, 0) = \varphi(x), \quad v(x, 0) = \psi(x) :$

բ. $u(x, x) = \varphi(x), \quad v(x, -x) = \psi(x), \quad x \geq 0 :$

գ. $u(x, 0) = \varphi(x), \quad v(x, -x) = \psi(x), \quad x \geq 0 :$

դ. $u(x, 0) = \varphi(x), \quad v(x, x) = \psi(x), \quad x \geq 0 :$

ե. $u(x, 0) = \varphi(x),$

$$v(x, -\frac{x}{2}) = \psi(x), \quad x \geq 0, \quad \varphi(0) = 0, \quad \psi(0) = 0 :$$

44. Ցույց տալ, որ

$$au_x + v_y = 0, \quad u_y + v_x = 0$$

համակարգը կլիմի հիպերբոլական տեսակի, այն և միայն այն դեպքում եթե

$a > 0$ և լուծել այն

$$u\left(x, \frac{x}{\sqrt{a}}\right) = \varphi(x), \quad v\left(x, -\frac{x}{\sqrt{a}}\right) = \psi(x)$$

պայմանների դեպքում:

Գ Լ ՈՒ Խ III

ՊԱՐԱԲՈԼԱԿԱՆ ՏԵՍԱԿԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ

§1. Պարաբոլական տեսակի հավասարումների բերվող խնդիրներ

Միջավայրում ջերմության տարածումը կամ դիֆուզիան նկարագրվում են *ընդհանուր դիֆուզիայի հավասարումով*

$$\rho \frac{\partial u}{\partial t} = \operatorname{div}(p \operatorname{grad} u) - qu + F(x, t) : \quad (1)$$

Մասնավորապես, եթե $u(x, t)$ ֆունկցիան նկարագրում է միջավայրի ջերմաստիճանը $x = (x_1, x_2, x_3)$ կետում ժամանակի t պահին, ապա այն բավարարում է

$$c\rho \frac{\partial u}{\partial t} = \operatorname{div}(k \operatorname{grad} u) + F(x, t) \quad (2)$$

ջերմության տարածման հավասարմանը, որտեղ $c(x)$, $\rho(x)$, $k(x)$ ֆունկցիաները համապատասխանաբար միջավայրի խտությունը, տեսակարար ջերմունակությունը և ջերմահաղորդականության գործակիցն են միջավայրի x կետում: $F(x, t)$ -ն ջերմության աղբյուրի ինտենսիվությունն է:

Եթե միջավայրը համասեռ է, այսինքն c , ρ և k ֆունկցիաները նույնաբար հաստատուններ են, ապա (2)-ն ընդունում է

$$\frac{\partial u}{\partial t} = a^2 \Delta u + f, \quad a^2 = \frac{k}{c\rho}, \quad f = \frac{F}{c\rho} \quad (3)$$

տեսքը, որտեղ $\Delta u = u_{x_1 x_1} + u_{x_2 x_2} + u_{x_3 x_3}$: (3) հավասարումն անվանում են *ջերմահաղորդականության հավասարում*:

Ջերմության տարածումը լիովին նկարագրելու համար անհրաժեշտ է գիտենալ միջավայրի սկզբնական ջերմաստիճանը (*սկզբնական պայման*) և միջավայրի *եզրային պայմանները*, եթե այն սահմանափակ է: (2), (3)

հավասարումները և նրանց համապատասխանող եզրային պայմանները հանդիսանում են

ա. էներգիայի պահպանման օրենքի,

բ. պինդ մարմիններում ներքին ջերմահաղորդականության օրենքի (*Ֆուրիեի օրենքի*),

գ. պինդ մարմնի մակերևույթի և նրան շրջապատող միջավայրի միջև կատարվող ջերմափոխանակության օրենքի (*Նյուտոնի օրենքի*)

հետևանքներ:

Միաչափ դեպքում Ֆուրիեի օրենքն արտահայտվում է

$$q = -\sigma \lambda \frac{\partial u}{\partial x} \quad (4)$$

բանաձևով, որտեղ q -ն այն ջերմության քանակությունն է, որը միավոր ժամանակում անցնում է x առանցքի ուղղությամբ և նրան ուղղահայաց σ հարթության միջով, λ -ն ջերմահաղորդականության գործակիցն է: Վերջինը, ընդհանրապես կախված է մարմնի ֆիզիկական հատկություններից և u ջերմաստիճանից:

Նյուտոնի օրենքը արտահայտվում է

$$q = \sigma \alpha (u - u_0) \quad (5)$$

բանաձևով, որտեղ q -ն այն ջերմության քանակությունն է, որը միավոր ժամանակում անցնում է մարմնի σ մակերևույթի միջով, u -ն մակերևույթի ջերմաստիճանն է, u_0 -ն շրջակա միջավայրի ջերմաստիճանն է, իսկ α -ն ջերմափոխանակության գործակիցը:

Եթե $u(x, t)$ ֆունկցիան նկարագրում է մարմնի խտությունը x կետում ժամանակի t պահին, ապա այն բավարարում է

$$\rho \frac{\partial u}{\partial t} = \operatorname{div}(D \operatorname{grad} u) - qu + F(x, t) \quad (6)$$

դիֆուզիայի հավասարմանը, որտեղ $\rho(x)$, $D(x)$, $q(x)$ ֆունկցիաները համապատասխանաբար միջավայրի ծակոտկենության, դիֆուզիայի և

կլանման գործակիցներն են: Համապատասխան եզրային պայմաններում դիֆուզիայի ենթարկված նյութի քանակությունը և կոնցենտրացիան նույն դերն են կատարում, ինչ ջերմահաղորդականության եզրային պայմաններում ջերմության քանակությունը և ջերմաստիճանը: Մասնավորապես, դիֆուզիայի օրենքը (*Ենճնստի օրենքը*) կարտահայտվի (4) բանաձևով, որտեղ $\lambda = D$ դիֆուզիայի գործակիցն է, իսկ q -ն այն նյութի քանակությունն է, որը միավոր ժամանակում դիֆուզիայի է ենթարկվում x առանցքի ուղղությամբ և նրան ուղղահայաց σ հարթության միջով: (5) բանաձևով արտահայտվում է *ժակոտկեն միջնորոնով կատարվող դիֆուզիայի օրենքը*.

Եթե m_0 զանգվածով քվանտային մասնիկը գտնվում է $V(x)$ պոտենցիալով արտաքին ուժային դաշտում, ապա նրա $\psi(x, t)$ ալիքային ֆունկցիան բավարարում է *Շրյոդինգերի հավասարմանը*

$$i\hbar \frac{\partial \psi}{\partial t} = -\frac{\hbar^2}{2m_0} \Delta \psi + V\psi,$$

որտեղ $\hbar = 1.054 \cdot 10^{-27}$ էրգ.վրկ Պլանկի հաստատունն է:

45. l երկարությամբ համասեռ ձողի կողմնային մակերևույթը ջերմամեկուսացված է, իսկ սկզբնական ջերմաստիճանը հավասար է $\varphi(x)$ -ի ($0 \leq x \leq l$): Ձևակերպել $t > 0$ պահին ձողի $u(x, t)$ ջերմաստիճանի որոշման խնդիրը, եթե

ա. ձողի ծայրերը ջերմամեկուսացված են,

բ. ձողի $x = 0$ և $x = l$ ծայրերը, սկսած $t = 0$ պահից, պահվում են $q(t)$ և $Q(t)$ ջերմաստիճաններում,

գ. $x = 0$ և $x = l$ ծայրերում կատարվում է ջերմափոխանակություն արտաքին միջավայրի հետ, որը ձողի ծայրերում ունի $T_0(t)$ և $T_l(t)$ ջերմաստիճանները:

46. R շառավղով և կոորդինատների սկզբնակետում կենտրոն ունեցող գունդը տաքացված է միջև T ջերմաստիճան: Ձևակերպել գնդի ջերմաստիճանի որոշման եզրային խնդիրը, եթե

ա. քիմիական ռեակցիայի հետևանքով, գնդի յուրաքանչյուր կետում կլանվում է ջերմության քանակություն, որը համեմատական է այդ կետում u ջերմաստիճանին, իսկ գնդի մակերևույթը ջերմամեկուսացված է,

բ. գնդում կան Q հաստատուն հզորությամբ ջերմային աղբյուրներ, իսկ նրա եզրում կատարվում է ջերմափոխանակություն՝ զրո ջերմաստիճան ունեցող միջավայրի հետ:

47. S հաստատուն լայնական հատույթով և l երկարությամբ խողովակում, որը լցված է ծակոտկեն նյութով, կատարվում է դիֆուզիա՝ սկզբնական $\varphi(x)$ կոնցենտրացիայով: Ձևակերպել $t > 0$ պահին գազի կոնցենտրացիայի որոշման եզրային խնդիրը, համարելով, որ խողովակի մակերևույթը անթափանց է և

ա. $x = 0$ ծայրում պահպանվում է $\mu(t)$ կոնցենտրացիա, իսկ $x = l$ ծայրը անթափանց է,

բ. $x = 0$ ծայրում պահպանվում է գազի $q(t)$ հոսք, իսկ $x = l$ ծայրը փակված է ծակոտկեն միջնորմով, որտեղ կատարվում է գազափոխանակություն, ընդ որում, արտաքին միջավայրն ունի զրոյական կոնցենտրացիա:

48. S հաստատուն լայնական հատույթով և l երկարությամբ խողովակը լցված է գազով, որի սկզբնական կոնցենտրացիան $\varphi(x)$ է: Խողովակի մակերևույթը ծակոտկեն է և նրա միջով կատարվում է նյութափոխանակություն $v(t)$ կոնցենտրացիա ունեցող միջավայրի հետ: Ձևակերպել խողովակում գազի u կոնցենտրացիայի որոշման եզրային խնդիրը $t > 0$ պահին, եթե

ա. գազի մասնիկները տրոհվում են (անկայուն գազ) և տրոհման արագությունը համեմատական է կոնցենտրացիայից քառակուսի արժանին,

բ. գազի մասնիկները բազմանում են $u u_t$ արտադրյալին համեմատական արագությամբ:

49. Ձևակերպել ջերմաստիճանի որոշման խնդիրը R շառավղով անվերջ գլանում, որի կողմնային մակերևույթը պահվում է զրոյական ջերմաստիճանում: $t = 0$ պահին գլանը ունեցել է $\varphi(r)$ ջերմաստիճան:

50. Ձևակերպել ջերմաստիճանի որոշման եզրային խնդիրը R շառավղով և $2h$ բարձրությամբ գլանում, եթե նրա սկզբնական ջերմաստիճանը եղել է $\varphi(r, \theta, z)$, իսկ կողմնային մակերևույթը և հիմքերը պահվում են զրոյական ջերմաստիճանում:

51. Ձևակերպել ջերմաստիճանի որոշման եզրային խնդիրը R շառավղով համասեռ գնդում, եթե սկզբնական ջերմաստիճանը եղել է $\varphi(r)$, իսկ մակերևույթի ջերմաստիճանը $\psi(t)$ է:

52. Ձևակերպել ջերմաստիճանի որոշման խնդիրը R շառավղով համասեռ գնդում, եթե սկզբնական ջերմաստիճանը եղել է $\psi(r, \theta, \varphi)$, իսկ մակերևույթը պահվում է զրոյական ջերմաստիճանում:

53. Ձևակերպել բարակ և համասեռ ուղղանկյուն թիթեղի ջերմաստիճանի որոշման խնդիրը, եթե նրա եզրագիծը պահվում է զրոյական ջերմաստիճանում, իսկ սկզբնական ջերմաստիճանը $\varphi(x, y)$:

54. Տրված է $2R$ հաստությամբ անսահմանափակ թիթեղ, որն ունի զրոյական ջերմաստիճան: Թիթեղը երկու կողմից տաքացվում է q հաստատուն ջերմային հոսքով: Ձևակերպել ջերմաստիճանի որոշման խնդիրը թիթեղում:

55. Ձևակերպել ջերմաստիճանի որոշման խնդիրը խողովակում, որի սկզբնական ջերմաստիճանը $f(r, \varphi)$ է: Խողովակի ներքին և արտաքին շառավիղները համապատասխանաբար a և b են: Ներքին և արտաքին պատերը պահվում են զրոյական ջերմաստիճանում:

§2. Եզրային և Կոչիի խնդիրներ

Պարաբոլական տեսակի հավասարումների բնորոշ օրինակ է *ջերմահաղորդականության հավասարումը*

$$\sum_{i=1}^n u_{x_i x_i} - u_t = f(x_1, x_2, \dots, x_n, t) : \quad (1)$$

Դիցուք Q -ն $(x_1, x_2, \dots, x_n, t)$ կետերի տարածության որևէ տիրույթ է, որը սահմանափակված է $t = T_0$ և $t = T_1$ հարթություններով ու այնպիսի է, որ ցանկացած $t = T$ հարթությամբ հատելիս, ստացվում է n -չափանի միակապ տիրույթ: S -ով նշանակենք Q տիրույթի կողմնային մակերևույթը (S -ը մասնավորապես կարող է լինել գլանային մակերևույթ), Ω -ով՝ ստորին հիմքը և Γ -ով՝ S -ի և Ω -ի միավորումը:

Առաջին եզրային (կամ Դիրիխլեի) խնդիրը կայանում է հետևյալում. գտնել $C^2(Q) \cap C(\bar{Q})$ դասին պատկանող այն $u(x_1, x_2, \dots, x_n, t)$ ֆունկցիան, որը Q տիրույթում բավարարի (1) հավասարմանը և եզրի Γ մասում համընկնի տրված $\varphi(x_1, x_2, \dots, x_n, t)$ անընդհատ ֆունկցիայի հետ:

Երբ Ω -ն համընկնում է R^n տարածության հետ, դրվում է *երկրորդ եզրային խնդիրը*, որը կայանում է հետևյալում. գտնել սահմանափակ և $C^2(R^{n+1}) \cap C(\bar{R}^{n+1})$ դասին պատկանող (1) հավասարման այնպիսի լուծում, որը $t = 0$ հիպերհարթության վրա համընկնի տրված $\varphi(x_1, x_2, \dots, x_n)$ անընդհատ և սահմանափակ ֆունկցիայի հետ:

Դիտարկենք երկու անկախ փոփոխականների դեպքը

$$\begin{aligned} u_t &= a^2 u_{xx} + f(x, t), \quad t > 0, \quad -\infty < x < +\infty, \\ u(x, 0) &= \varphi(x), \quad -\infty < x < +\infty, \end{aligned} \quad (2)$$

որտեղ $\varphi(x)$ -ը անընդհատ և սահմանափակ ֆունկցիա է:

Հայտնի է, որ $f(x, t) \equiv 0$ դեպքում, (2) խնդրի լուծումը տրվում է

$$u(x, t) = \frac{1}{2a\sqrt{\pi t}} \int_{-\infty}^{+\infty} \varphi(\xi) e^{-\frac{(x-\xi)^2}{4a^2 t}} d\xi \quad (3)$$

տեսքով:

Ընդհանուր դեպքում ($f(x, t) \not\equiv 0$), (2) խնդրի լուծումը կարելի է կառուցել Դյուամելի եղանակով: Համառոտ նկարագրենք այն: Եթե $w(x, t, \tau)$ ֆունկցիան

$$\begin{aligned} w_t &= a^2 w_{xx}, \quad t > 0, \quad -\infty < x < +\infty, \\ w(x, \tau, \tau) &= f(x, \tau), \quad -\infty < x < +\infty \end{aligned} \quad (4)$$

խնդրի լուծումն է, որտեղ τ -ն դրական պարամետր է, ապա (2) խնդրի լուծումը տրվում է

$$u(x, t) = \int_0^t w(x, t, \tau) d\tau \quad (5)$$

բանաձևով:

56. Ցույց տալ, որ (3) բանաձևով տրվող ֆունկցիան, որտեղ $\varphi(x)$ -ը $(-\infty < x < +\infty)$ անընդհատ և սահմանափակ ֆունկցիա է, հանդիսանում է (2) խնդրի լուծում:

57. Ստուգել, որ

$$E(x, t) = \frac{1}{(t - t_0)^{\frac{n}{2}}} e^{\left[-\frac{\sum_{i=1}^n (x_i - y_i)^2}{4(t - t_0)} \right]}$$

ֆունկցիան հանդիսանում է (1) հավասարման լուծում:

($E(x, t)$ ֆունկցիան կոչվում է (1) հավասարման *հիմնարար լուծում*):

58. Ցույց տալ, որ (5) բանաձևով որոշվող ֆունկցիան հանդիսանում է (2) խնդրի լուծում, ուր

$$w(x, t, \tau) = \frac{1}{2a\sqrt{\pi(t - \tau)}} \int_{-\infty}^{+\infty} e^{-\frac{(x - \xi)^2}{4a^2(t - \tau)}} f(\xi, \tau) d\xi,$$

իսկ $f(x, t)$ -ն անընդհատ և սահմանափակ ֆունկցիա է:

59. Լուծել հետևյալ խնդիրները՝ տվյալները համապատասխան ձևով շարունակելով ամբողջ թվային առանցքի վրա

ա. $u_t = a^2 u_{xx}$, $0 < x < +\infty$, $t > 0$,

$u(0, t) = 0$, $t > 0$, $u(x, 0) = \varphi(x)$, $0 < x < +\infty$:

բ. $u_t = a^2 u_{xx}$, $0 < x < +\infty$, $t > 0$,

$$u_x(0, t) = 0, \quad t > 0, \quad u(x, 0) = \varphi(x), \quad 0 < x < +\infty :$$

$$\text{q. } u_t = a^2 u_{xx} - hu, \quad 0 < x < +\infty, \quad t > 0,$$

$$u(0, t) = 0, \quad t > 0, \quad u(x, 0) = \varphi(x), \quad 0 < x < +\infty :$$

$$\text{դ. } u_t = a^2 u_{xx} - hu, \quad 0 < x < +\infty, \quad t > 0,$$

$$u_x(0, t) = 0, \quad t > 0, \quad u(x, 0) = \varphi(x), \quad 0 < x < +\infty :$$

$$\text{ե. } u_t = a^2 u_{xx} + f(x, t), \quad 0 < x < +\infty, \quad t > 0,$$

$$u(0, t) = 0, \quad t > 0, \quad u(x, 0) = 0, \quad 0 < x < +\infty :$$

$$\text{զ. } u_t = a^2 u_{xx} + f(x, t), \quad 0 < x < +\infty, \quad t > 0,$$

$$u_x(0, t) = 0, \quad t > 0, \quad u(x, 0) = 0, \quad 0 < x < +\infty :$$

$$\text{է. } u_t = a^2 u_{xx} - hu + f(x, t), \quad 0 < x < +\infty, \quad t > 0,$$

$$u(0, t) = 0, \quad t > 0, \quad u(x, 0) = \varphi(x), \quad 0 < x < +\infty :$$

$$\text{ը. } u_t = a^2 u_{xx} - hu + f(x, t), \quad 0 < x < +\infty, \quad t > 0,$$

$$u_x(0, t) = 0, \quad t > 0, \quad u(x, 0) = \varphi(x), \quad 0 < x < +\infty :$$

$$\text{թ. } u_t = a^2 u_{xx} - hu + f(x, t), \quad 0 < x < +\infty, \quad t > 0,$$

$$u(0, t) = 0, \quad t > 0, \quad u(x, 0) = \varphi(x), \quad 0 < x < +\infty :$$

$$\text{ժ. } u_t = a^2 u_{xx} - hu + f(x, t), \quad 0 < x < +\infty, \quad t > 0,$$

$$u_x(0, t) = 0, \quad t > 0, \quad u(x, 0) = \varphi(x), \quad 0 < x < +\infty :$$

60. Ցույց տալ, որ

$$u(x, t) = \sum_{k=0}^{\infty} \frac{t^k}{k!} \Delta^k \tau(x_1, \dots, x_n) \quad (6)$$

Ֆունկցիան հանդիսանում է (1) հավասարման լուծում, եթե $\tau \in C^\infty(R)$ և (6) շարքը կարելի է անդամ-առ-անդամ ածանցել մեկ անգամ ըստ t -ի, և երկու անգամ ըստ յուրաքանչյուր x_i -ի:

61. Դիցուք Q -ն (x, y, t) փոփոխականների տարածության մեջ $t = 0, t = T > 0$ հարթություններով և $S : x^2 + y^2 = 1$ շրջանային գլանով սահմանափակված տիրույթն է: Օգտվելով (6) բանաձևից, գտնել Q -ում ռեգուլյար այնպիսի $u(x, y, t)$ ֆունկցիա, որը բավարարի

$$u_t = u_{xx} + u_{yy}$$

հավասարմանը և հետևյալ եզրային ու սկզբնական պայմաններին

ա. $u|_S = -4t$, $u(x, y, 0) = 1 - x^2 - y^2$:

բ. $u|_S = -32t^2 - 16t$, $u(x, y, 0) = 1 - (x^2 + y^2)^2$:

գ. $u|_S = 1 + 4t$, $u(x, y, 0) = 1 - x^2 - y^2$:

դ. $u|_S = e^{2t + \cos \varphi + \sin \varphi}$, $0 \leq \varphi \leq 2\pi$, $u(x, y, 0) = e^{x+y}$:

ե. $u|_S = 1 + 16t + 32t^2$, $u(x, y, 0) = (x^2 + y^2)^2$:

զ. $u|_S = 1 + 36t + 288t^2 + 384t^3$, $u(x, y, 0) = (x^2 + y^2)^3$:

62. Ստուգել, որ

$$u(x, y, t) = \sum_{n=0}^{\infty} \frac{t^k}{p^k k!} \Delta^k \tau(x, y)$$

ֆունկցիան, որտեղ $\Delta = \frac{\partial^2}{\partial x^2} + \frac{\partial^2}{\partial y^2}$, իսկ $\tau(x, y)$ -ը կամայական բազմանդամ է x և y փոփոխականներից, հանդիսանում է

$$u_{xx} + u_{yy} = pu_t, \quad p = \text{const}$$

հավասարման լուծում:

63. Ցույց տալ, որ

$$u(x, t) = \sum_{k=0}^{\infty} \frac{t^k}{k!} \Delta^{2k} \tau(x) \quad (7)$$

ֆունկցիան, որտեղ $\tau \in C^\infty(R^n)$, իսկ (7) շարքը կարելի է անդամ-անդամ ածանցել չորս անգամ ըստ յուրաքանչյուր x_i փոփոխականի և մեկ անգամ ըստ t -ի, հանդիսանում է

$$\Delta \Delta u - u_t = 0 \quad (8)$$

հավասարման լուծում:

64. (1) հավասարման համար կառուցել Կոշիի խնդրի լուծումը՝ հետևյալ սկզբնական պայմանով

ա. $u(x_1, x_2, \dots, x_n, 0) = \sin lx_1 :$

բ. $u(x_1, x_2, \dots, x_n, 0) = \cos lx_1 :$

գ. $u(x_1, x_2, \dots, x_n, 0) = chlx_1 :$

դ. $u(x_1, x_2, \dots, x_n, 0) = shlx_1 :$

ե. $u(x_1, x_2, \dots, x_n, 0) = \sin l_1 x_1 \sin l_2 x_2 :$

զ. $u(x_1, x_2, \dots, x_n, 0) = \sin lx_1 \cos l_2 x_2 :$

է. $u(x_1, x_2, \dots, x_n, 0) = \cos l_1 x_1 \cos l_n x_n :$

ը. $u(x_1, x_2, \dots, x_n, 0) = \cos l_1 x_1 \sin l_2 x_2 :$

թ. $u(x_1, x_2, \dots, x_n, 0) = \sin l_1 x_1 \sin l_2 x_2 \dots \sin l_n x_n :$

ժ. $u(x_1, x_2, \dots, x_n, 0) = \sin l_1 x_1 + \cos l_n x_n :$

ի. $u(x_1, x_2, \dots, x_n, 0) = e^{l_1 x_1} :$

լ. $u(x_1, x_2, \dots, x_n, 0) = e^{l_1 x_1 + l_2 x_2 + \dots + l_n x_n} :$

խ. $u(x, y, 0) = x^2 y + xy^2 + xy :$

ճ. $u(x, y, 0) = (x + y)^5 :$

կ. $u(x, y, z, 0) = (x^2 + y^2 + z^2)^2 :$

հ. $u(x, y, z, 0) = (xyz)^2 :$

ձ. $u(x, y, z, 0) = (xyz)^3 :$

ղ. $u(x, y, z, 0) = x^2 y^2 + x^2 z^2 + y^2 z^2 :$

ճ. $u(x, y, z, 0) = x^3 + y^3 + z^3 :$

65. Ցույց տալ, որ

$$u(x, t) = \sum_{k=0}^{\infty} \frac{t^{2k}}{(2k)!} \Delta^{2k} \tau(x) + \sum_{k=0}^{\infty} \frac{t^{2k+1}}{(2k+1)!} \Delta^{2k} \nu(x) \quad (9)$$

Ֆունկցիան, որտեղ $\nu, \tau \in C^\infty(R^n)$, իսկ (9) շարքերը կարելի է ցանկացած անգամ անդամ-առ-անդամ ածանցել, հանդիսանում է

$$\Delta \Delta u - u_{tt} = 0 \quad (10)$$

հավասարման լուծում:

66. Օգտվելով (7) բանաձևից, գտնել (8) հավասարման այնպիսի լուծումներ, որոնք բավարարեն 64 խնդրի ա-ճ պայմաններին:

67. Օգտվելով (9) բանաձևից, գտնել (10) հավասարման այնպիսի լուծումներ, որոնք բավարարեն հետևյալ պայմաններին

ա. $u(x_1, x_2, \dots, x_n, 0) = \sin x_1$, $u_t(x_1, x_2, \dots, x_n, 0) = \cos x_1$:

բ. $u(x, y, z, 0) = (x^3 + y^3 + z^3)^2$, $u_t(x, y, z, 0) = x^2 y^2 z^2$:

գ. $u(x, y, z, 0) = (x + y + z)^3$, $u_t(x, y, z, 0) = (xyz)^3$:

դ. $u(x_1, x_2, \dots, x_n, 0) = chl x_1$, $u_t(x_1, x_2, \dots, x_n, 0) = shm x_1$:

ե. $u(x_1, x_2, \dots, x_n, 0) = e^{ax_1}$, $u_t(x, 0) = e^{bx_1}$:

Գ Լ ՈՒ Խ IV

ԷԼԻՊՏԱԿԱՆ ՏԵՍԱԿԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ

§1. Էլիպտական տեսակի հավասարման բերվող խնդիրներ

Ստացիոնար (ժամանակից անկախ) երևույթների նկարագրման ժամանակ, թե ալիքային (տես գլուխ 2), և թե դիֆուզիայի ընդհանուր (տես գլուխ 3) հավասարումները ստանում են հետևյալ տեսքը

$$-div(p \operatorname{grad} u) + qu = F(x) : \quad (1)$$

եթե $p = const$ և $q = 0$ ապա (1) հավասարումն

$$\Delta = -f, \quad f = \frac{F}{p} \quad (2)$$

անվանում են *Պուասոնի հավասարում*, իսկ եթե նաև $f = 0$ ապա

$$\Delta u = 0 \quad (3)$$

Լապլասի հավասարում: Ստացիոնար երևույթների լրիվ նկարագրության համար անհրաժեշտ է գիտենալ նաև միջավայրի եզրային պայմանները՝ *առաջին սեռի* եզրային պայմանը՝

$$u|_S = f_1.$$

երկրորդ սեռի եզրային պայմանը՝

$$\frac{\partial u}{\partial n}|_S = f_2.$$

երրորդ սեռի եզրային պայմանը՝

$$\frac{\partial u}{\partial n} + hu|_S = f_3 :$$

Եթե ալիքային հավասարման մեջ արտաքին $f(x, t)$ գրգռումն ունի

$$f(x, t) = a^2 f(x) e^{i\omega t}$$

տեսքը, ապա $u(x, t)$ լուծումը փնտրելով $u(x) e^{i\omega t}$ տեսքով, $u(x)$ հավասարման համար կստանանք

$$\Delta u + k^2 u = -f(x), \quad k^2 = \frac{\omega^2}{a^2}$$

Հելմհոլցի հավասարումը: Հելմհոլցի հավասարման են բերվում, օրինակ, ցրման (դիֆրակցիայի) խնդիրները:

Եթե m_0 զանգվածով քվանտային մասնիկն ունի որոշակի E էներգիա, ապա նրա $\psi(x, t)$ ալիքային ֆունկցիան ունի

$$\psi(x, t) = e^{-\frac{i}{\hbar} E t} \psi(x)$$

տեսքը, որտեղ $\psi(x)$ -ը բավարարում է Շրյոդինգերի ստացիոնար հավասարմանը

$$-\frac{\hbar^2}{2m_0} \Delta \psi + V \psi = E \psi : \quad (2)$$

Եթե $V = 0$ (ազատ մասնիկ), ապա (2) հավասարումը վերածվում է Հելմհոլցի համասեռ հավասարման:

Ստացիոնար պրոցեսների դեպքում Մաքսվելի հավասարումները (տես գլուխ 2) վերածվում են *էլեկտրաստատիկայի*

$$\operatorname{div}(\varepsilon \mathbf{E}) = 4\pi \rho, \quad \operatorname{rot} \mathbf{E} = 0$$

և մագնիտաստատիկայի

$$\operatorname{div}(\mu \mathbf{H}) = 0, \quad \operatorname{rot} \mathbf{H} = \frac{4\pi}{c} \mathbf{I}$$

հավասարումների: Եթե $\varepsilon = \operatorname{const}$, ապա էլեկտրաստատիկ պոտենցիալը բավարարում է Պուասոնի հավասարմանը

$$\Delta u = -\frac{4\pi}{\varepsilon} \rho :$$

Լուծել հետևյալ խնդիրները

68. Օգտվելով Մաքսվելի հավասարումներից, ցույց տալ, որ էլեկտրաստատիկ դաշտի պոտենցիալը բավարարում է Պուասոնի հավասարմանը, որի աջ մասը համեմատական է ծավալային լիցքերի $\rho(x, y, z)$ խտությանը: Ձևակերպել հնարավոր եզրային պայմանները և տալ նրանց ֆիզիկական մեկնաբանումը:

69. Ցույց տալ, որ ստացիոնար մագնիսական դաշտի պոտենցիալը բավարարում է Լապլասի հավասարմանը:

70. Ցույց տալ, որ ստացիոնար էլեկտրական դաշտի պոտենցիալը բավարարում է Լապլասի հավասարմանը: Ձևակերպել եզրային պայմանները:

ա. հողակցված իդեալական հաղորդչի մակերևույթի վրա,

բ. դիէլեկտրիկի և հաղորդչի եզրի վրա:

71. Էլեկտրաստատիկ դաշտը, որը ստեղծվում է վերջավոր չափսեր ունեցող լիցքավորված հաղորդչի կողմից՝ կարելի է որոշել, եթե

ա. տրված է հաղորդչի պոտենցիալի արժեքը,

բ. տրված է հաղորդչի լիցքի մեծությունը:

Այս խնդիրները կոչվում են *էլեկտրաստատիկայի առաջին և երկրորդ հիմնական խնդիրներ*։ Տալ այդ խնդիրների մաթեմատիկական ձևակերպումը:

72. Դուրս բերել ստացիոնար դիֆուզիայի հավասարումը՝ համասեռ, իզոտրոպ միջավայրում:

73. Ցույց տալ, որ անսեղմելի հեղուկի ստացիոնար հոսանքի արագությունների պոտենցիալը բավարարում է Լապլասի հավասարմանը: Ձևակերպել եզրային պայմանը՝ պինդ մարմնի մակերևույթին, որը գտնվում է ռեզուկում դադարի վիճակում:

§2. Հարմոնիկ ֆունկցիաներ և պարզագույն եզրային խնդիրներ

Էլիպտական տեսակի հավասարման պարզագույն օրինակ է

$$\Delta u = f$$

Պուլասոնի հավասարումը, որտեղ

$$\Delta = \sum_{i=1}^n \frac{\partial^2}{\partial x_i^2} :$$

Պուլասոնի հավասարման համապատասխան համասեռ հավասարումը կոչվում է *Լապլասի հավասարում*՝

$$\Delta u = 0 :$$

Դիցուք $S \subset R^n$ որևէ փակ մակերևույթ է և D -ն նրանով սահմանափակված տիրույթն է: Կասենք, որ $u(x)$ ֆունկցիան պատկանում է $C^m(D \cup S)$ դասին, եթե $u(x)$ -ը անընդհատ է $D \cup S$ -ում իր մինչև m -րդ կարգի մասնակի ածանցյալների հետ միասին: $C^0(D \cup S)$ -ը $D \cup S$ -ում անընդհատ ֆունկցիաների դասն է:

$u(x)$ ($x \in D \cup S$) ֆունկցիան կոչվում է *ռեգուլյար*, եթե բավարարում է հետևյալ պայմաններին.

ա. $u(x) \in C^0(D \cup S) \cap C^2(D)$,

բ. եթե D տիրույթն անսահմանափակ է, ապա $n = 2$ դեպքում $u(x)$ -ը սահմանափակ է, իսկ $n > 2$ դեպքում անվերջում ձգտում է զրոյի ոչ դանդաղ քան $\frac{1}{|x|^{n-2}}$ -ը:

Լապլասի հավասարման ռեգուլյար լուծումները կոչվում են *հարմոնիկ ֆունկցիաներ*: Հարմոնիկ ֆունկցիաների տեսության մեջ կենտրոնական տեղ են զբաղում *Դիրիխլեի և Նեյմանի եզրային խնդիրները*: Այդ խնդիրները նաև անվանում են առաջին և երկրորդ եզրային խնդիրներ:

Դիրիխլեի խնդիրը. գտնել D տիրույթում այնպիսի $u(x)$ հարմոնիկ ֆունկցիա, որը բավարարի

$$u(x) = \varphi(x), \quad x \in S$$

եզրային պայմանին, որտեղ $\varphi(x)$ -ը S -ի վրա տրված անընդհատ ֆունկցիա է:

Նեյմանի խնդիրը. գտնել $C^1(D \cup S)$ դասում այնպիսի $u(x)$ հարմոնիկ ֆունկցիա, որը բավարարի

$$\frac{\partial u}{\partial n} = \varphi(x), \quad x \in S$$

եզրային պայմանին, որտեղ n -ը S -ի արտաքին նորմալն է, իսկ $\varphi(x)$ -ը S -ի վրա տրված անընդհատ ֆունկցիա է:

Որպեսզի Նեյմանի խնդիրը լուծում ունենա անհրաժեշտ է և բավարար, որ

$$\int_S \varphi(x) dS = 0 : \quad (1)$$

Եթե (1) պայմանը բավարարված է, ապա ասում են, որ Նեյմանի խնդիրը ճիշտ է դրված:

$f(z) = u(x, y) + iv(x, y)$, $z = x + iy$ անալիտիկ ֆունկցիայի իրական և կեղծ մասերը հանդիսանում են հարմոնիկ ֆունկցիաներ (համալուծ հարմոնիկ ֆունկցիաներ): Այս փաստով է պայմանավորված երկու անկախ փոփոխականներով հարմոնիկ ֆունկցիաների և մեկ կոմպլեքս փոփոխականով անալիտիկ ֆունկցիաների սերտ կապը:

74. Գտնել Լապլասի օպերատորի տեսքը

ա. բևեռային կոորդինատներում $x = r \cos \varphi$, $y = r \sin \varphi$,

բ. գլանային կոորդինատներում $x = r \cos \varphi$, $y = r \sin \varphi$, $z = z$,

գ. սֆերիկ կոորդինատներում $x = r \sin \theta \cos \varphi$, $y = r \sin \theta \sin \varphi$, $z = r \cos \theta$:

Որոշ խնդիրներ լուծելիս կարելի է օգտվել այն բանից, որ $u(x, y) = A(x^2 - y^2) + Bxy + Cx + Dy$ բազմանդամը հանդիսանում է $u_{xx} + u_{yy} = 0$ հավասարման լուծում:

75. Գտնել $0 \leq \rho < a$, $0 \leq \varphi \leq 2\pi$ շրջանում որոշված այնպիսի $u(\rho, \varphi)$ հարմոնիկ ֆունկցիա, որը բավարարի հետևյալ եզրային պայմանին

ա. $u(a, \varphi) = A :$

բ. $u(a, \varphi) = A \cos \varphi :$

գ. $u(a, \varphi) = A + By :$

դ. $u(a, \varphi) = Axy :$

ե. $u(a, \varphi) = A + B \sin \varphi :$

զ. $u(a, \varphi) = A \sin^2 \varphi + B \cos^2 \varphi :$

76. Գտնել $0 \leq \rho < a$, $0 \leq \varphi \leq 2\pi$ շրջանում որոշված այնպիսի $u(\rho, \varphi)$ հարմոնիկ ֆունկցիա, որը բավարարի հետևյալ եզրային պայմանին: Նշել նաև ոչ ճիշտ դրված խնդիրները

ա. $u_\rho(a, \varphi) = A :$

բ. $u_\rho(a, \varphi) = Ax :$

գ. $u_\rho(a, \varphi) = A(x^2 - y^2) :$

դ. $u_\rho(a, \varphi) = A \cos \varphi + B :$

ե. $u_\rho(a, \varphi) = A \sin \varphi + B \sin^3 \varphi :$

77. Գտնել $0 \leq \rho < a$, $0 \leq \varphi \leq 2\pi$ շրջանի դրսում որոշված այնպիսի $u(\rho, \varphi)$ հարմոնիկ ֆունկցիա, որը բավարարի 75 խնդրի ա-զ եզրային պայմաններին:

78. Գտնել $0 \leq \rho \leq a$, $0 \leq \varphi \leq 2\pi$ շրջանի դրսում որոշված այնպիսի $u(\rho, \varphi)$ հարմոնիկ ֆունկցիա, որը բավարարի 76 խնդրի ա-ե եզրային պայմաններին:

79. Գտնել $a < \rho < b$ օղակում որոշված այնպիսի $u(\rho, \varphi)$ հարմոնիկ ֆունկցիա, որը բավարարի $u(a, \varphi) = u_1$, $u(b, \varphi) = u_2$ եզրային

արժեքներին:

80. Գտնել $0 < \rho < a$, $0 < \varphi < \alpha$ շրջանային սեկտորում այնպիսի $u(\rho, \varphi)$ հարմոնիկ ֆունկցիա, որը բավարարի հետևյալ պայմաններին

$$u(a, \varphi) = \frac{u_0}{\alpha} \varphi, \quad u(\rho, 0) = 0, \quad u(\rho, \alpha) = u_0 :$$

81. Գտնել $y > 0$ կիսահարթության մեջ Լապլասի հավասարման այնպիսի լուծում, որն ընդունի հետևյալ եզրային արժեքները

$$u|_{x<0, y=0} = \varphi_1, \quad u|_{x>0, y=0} = \varphi_2 :$$

82. Գտնել այնպիսի հարմոնիկ ֆունկցիա

ա. $\rho = a$ շառավղով գնդում,

բ. $\rho = a$ շառավղով գնդից դուրս,

որը $\rho = a$ սֆերայի վրա ընդունի $u_0 = \text{const}$ արժեքը:

83. Գտնել $z = 0$ և $z = h$ հարթություններով սահմանափակված շերտում այնպիսի հարմոնիկ ֆունկցիա, որը բավարարի

$$u|_{z=0} = u_1, \quad u|_{z=h} = u_2$$

եզրային պայմաններին:

84. Գտնել $0 < x < a$, $0 < y < b$ ուղղանկյան մեջ այնպիսի հարմոնիկ ֆունկցիա, որը բավարարի հետևյալ պայմաններին

$$u(x, 0) = u_1, \quad u(x, b) = u_2, \quad u_x|_{x=0, x=a} = 0 :$$

85. Գտնել $\Delta u = 1$ հավասարման այն լուծումը $\rho < a$ շրջանում, որի համար $u|_{\rho=a} = 0$:

86. Գտնել $\Delta u = \frac{aA}{2}$ հավասարման այն լուծումները $\rho < a$ շրջանում, որոնց համար

$$\frac{\partial u}{\partial n}|_{\rho=a} = B :$$

87. Գտնել $\Delta u = A$ հավասարման այն լուծումները $a < \rho < b$ օղակում, որոնք բավարարում են հետևյալ եզրային պայմաններին

ա. $u|_{\rho=a} = u_1, \quad u|_{\rho=b} = u_2,$

բ. $u|_{\rho=a} = u_1, \quad \frac{\partial u}{\partial n}|_{\rho=b} = C,$

գ. $\frac{\partial u}{\partial n}|_{\rho=a} = B, \quad u|_{\rho=b} = C,$

88. Գտնել

ա. $\Delta u = 1,$

բ. $\Delta u = A\rho + B$

հավասարումների լուծումները $\rho < a$ գնդում, եթե

$$u|_{\rho=a} = 0$$

89. Գտնել

ա. $\Delta u = 1,$

բ. $\Delta u = A + \frac{B}{\rho}$

հավասարումների լուծումները $a < \rho < b$ սֆերիկ շերտում, եթե

$$u|_{\rho=a} = 0, \quad u|_{\rho=b} = 0 :$$

90. Որոշել ջերմաստիճանի ստացիոնար բաշխումը $a < \rho < b$ սֆերիկ շերտում, եթե $\rho = a$ սֆերան պահվում է u_1 ջերմաստիճանում, իսկ $\rho = b$ -ն u_2 :

91. Դիցուք $u = u(x_1, \dots, x_n)$ -ը հարմոնիկ ֆունկցիա է ինչ որ տիրույթում: Պարզել, թե հետևյալ ֆունկցիաներից յուրաքանչյուրը հարմոնիկ է, արդյոք, այդ նույն տիրույթում

ա. $u(x+h), \quad h = (h_1, \dots, h_n)$ -ը հաստատուն վեկտոր է,

բ. $u(\lambda h), \quad \lambda$ -ն սկալյար հաստատուն է,

գ. $u(Cx), \quad C$ -ն հաստատուն, օրթոգոնալ մատրից է,

դ. $\frac{\partial u}{\partial x_1} \frac{\partial u}{\partial x_2} \quad (n=2),$

$$\text{ե. } \frac{\partial u}{\partial x_1} \frac{\partial u}{\partial x_2} \quad (n > 2),$$

$$\text{զ. } x_1 \frac{\partial u}{\partial x_1} + x_2 \frac{\partial u}{\partial x_2} + x_3 \frac{\partial u}{\partial x_3}, \quad (n = 3),$$

$$\text{է. } x_1 \frac{\partial u}{\partial x_1} - x_2 \frac{\partial u}{\partial x_2}, \quad (n = 2),$$

$$\text{ը. } x_2 \frac{\partial u}{\partial x_1} - x_1 \frac{\partial u}{\partial x_2}, \quad (n = 2),$$

$$\text{թ. } \frac{\frac{\partial u}{\partial x_1}}{\left(\frac{\partial u}{\partial x_1}\right)^2 + \left(\frac{\partial u}{\partial x_2}\right)^2}, \quad (n = 2),$$

$$\text{ժ. } \left(\frac{\partial u}{\partial x_1}\right)^2 - \left(\frac{\partial u}{\partial x_2}\right)^2, \quad (n = 2),$$

$$\text{ի. } \left(\frac{\partial u}{\partial x_1}\right)^2 + \left(\frac{\partial u}{\partial x_2}\right)^2, \quad (n = 2) :$$

92. Գտնել k հաստատունի այն արժեքը, որի դեպքում տրված ֆունկցիան հարմոնիկ է

$$\text{ա. } x_1^3 + kx_1x_2^2,$$

$$\text{բ. } x_1^2 + x_2^2 + kx_3^2,$$

$$\text{գ. } e^{2x_1} \operatorname{ch} kx_2,$$

$$\text{դ. } \sin 3x_1 \operatorname{ch} kx_2,$$

$$\text{ե. } \frac{1}{|x|^k}, \quad |x|^2 = \sum_{i=1}^n x_i^2, \quad |x| \neq 0 :$$

93. Ցույց տալ, որ $u(x)$ հարմոնիկ ֆունկցիայի հետ միաժամանակ հարմոնիկ է նաև

$$v(x) = \frac{1}{|x|^{n-2}} u\left(\frac{x}{|x|^2}\right)$$

ֆունկցիան՝ ամենուրեք, որտեղ այն որոշված է:

94. Դիցուք ρ -ն և φ -ն բևեռային կոորդինատներն են հարթության վրա: Ցույց տալ, որ $n \geq 0$ դեպքում

ա. $u(r, \varphi) = r^n \cos n\varphi$, $v(r, \varphi) = r^n \sin n\varphi$ ֆունկցիաները հարմոնիկ են ամբողջ հարթության վրա.

բ. $u(r, \varphi) = r^{-n} \cos n\varphi$, $v(r, \varphi) = r^{-n} \sin n\varphi$, $w(r) = \ln r$ ֆունկցիաները հարմոնիկ են ամբողջ հարթության վրա բացի կոորդինատների սկզբնակետից:

95. Ցույց տալ, որ $|z| < R$ շրջանում $u(x, y)$ հարմոնիկ ֆունկցիան ներկայացվում է որպես

$$\sum_{k=0}^{\infty} r^k (a_k \cos k\varphi + b_k \sin k\varphi)$$

շարքի գումար, որտեղ $r = |z|$, $\varphi = \arg z$, $z = x + iy$, իսկ a_k -ն և b_k -ն իրական հաստատուններ են:

96. Ցույց տալ, որ $|z| \leq R$ շրջանից դուրս սահմանափակ հարմոնիկ $u(x, y)$ ֆունկցիան ներկայացվում է

$$u(x, y)' = \sum_{k=0}^{\infty} r^{-k} (a_k \cos k\varphi + b_k \sin k\varphi)$$

բանաձևով, որտեղ $r = |z|$, $\varphi = \arg z$, $z = x + iy$, իսկ a_k -ն և b_k -ն իրական հաստատուններ են:

97. Ցույց տալ

$$u(x) = \sum_{k=0}^{\infty} (-1)^k \left(\frac{x_n^{2k}}{(2k)!} \Delta^k \tau(x_1, \dots, x_{n-1}) + \frac{x_n^{2k+1}}{(2k+1)!} \Delta^k \nu(x_1, \dots, x_{n-1}) \right) \quad (2)$$

ֆունկցիայի հարմոնիկությունը, եթե τ -ն և ν -ն կամայական անվերջ դիֆերենցելի ֆունկցիաներ են, իսկ (2) շարքը կարելի է երկու անգամ ածանցել ըստ յուրաքանչյուր x_i փոփոխականի:

98. Ստուգել, որ

$$E(x, y) = \begin{cases} \frac{1}{n-2}|x-y|^{2-n}, & n > 2 \\ -ln|x-y|, & n = 2 \end{cases},$$

ֆունկցիան բավարարում է Լապլասի հավասարմանը ինչպես ըստ x , այնպես էլ ըստ y կետերի, եթե միայն $x \neq y$, որտեղ $|x-y|$ -ը x և y n չափանիշ կետերի միջև հեռավորությունն է:

99. Օգտվելով (2) բաձկից լուծել

$$\Delta u(x, y, z) = 0, \quad u(x, y, 0) = g(x, y), \quad u_z(x, y, 0) = h(x, y)$$

Կոշիի խնդիրը, երբ

ա. $g = x + 2y, \quad h = 2x - y^2 :$

բ. $g = xe^y, \quad h = 0 :$

գ. $g = xy + x^2, \quad h = e^x + y :$

դ. $g = x \sin y, \quad h = \cos y :$

ե. $g = x^3 + 2, \quad h = 2x^2 - y :$

զ. $g = \cos 2x, \quad h = x - 2 \sin 2y :$

100. Ի՞նչ արժեք է հարկավոր վերագրել $u(a)$ -ին, որպեսզի $u(r)$ -ը $K : a < r < b, 0 \leq \varphi \leq 2\pi, 0 < a < b < \infty$, օղակում լինի հարմոնիկ, $\bar{K}$ -ում անընդհատ և ($a < c < b$)

ա. $u(c) = T_0, \quad u(b) = T :$

բ. $u(c) = T, \quad u_r(b) = U :$

գ. $u(c) = T, \quad u_r(b) + hu(b) = W :$

դ. $u_r(c) = U, \quad u(b) = T :$

101. Ի՞նչ արժեք է հարկավոր վերագրել $u(a)$ -ին և $u(b)$ -ին, որպեսզի $u(r)$ -ը $K : a < r < b, 0 \leq \varphi \leq 2\pi, 0 < a < b < \infty$ օղակում լինի հարմոնիկ, $\bar{K}$ -ում անընդհատ և ($a < c < b, a < d < b$)

ա. $u(c) = T_0, \quad u(d) = T_1 :$

բ. $u_r(c) = U, \quad u(d) = T :$

ա. $G(x, y)$ ֆունկցիան կարելի է ներկայացնել Լապլասի հավասարման հիմնարար $E(x, y)$ լուծման և $C(\bar{D})$ դասին պատկանող $g(x, y)$ հարմոնիկ ֆունկցիայի գումարի տեսքով՝ $G(x, y) = E(x, y) + g(x, y)$,

բ. D տիրույթի S եզրի վրա $G(x, y)$ ֆունկցիան հավասար է զրոյի:
Գրինի ֆունկցիայի սահմանումից բխում են նրա հետևյալ պարզագույն հատկությունները

ա. Գրինի ֆունկցիան հարմոնիկ է D տիրույթում ըստ x -ի, բացառությամբ y կետի,

բ. եթե Գրինի ֆունկցիան գոյություն ունի, ապա այն միակն է,

գ. Գրինի ֆունկցիան դրական է D տիրույթում,

դ. Գրինի ֆունկցիան սիմետրիկ է՝ $G(x, y) = G(y, x)$:

Դիցուք S փակ մակերևույթը բաժանում է R^n տարածությունը D^+ ներքին և D^- արտաքին տիրույթների: Գրինի ֆունկցիան ունի հետևյալ ֆիզիկական մեկնաբանությունը:

D^- տիրույթում բաշխենք լիցքեր այնպես, որպեսզի այդ լիցքերի $g(x, y)$ պոտենցիալը S մակերևույթի վրա համընկնի - $E(x, y)|_{y \in S}$ պոտենցիալի հետ: $g(x, y)$ ֆունկցիան հարմոնիկ է D^+ տիրույթում ըստ y փոփոխականի, քանի որ նա հանդիսանում է D^+ տիրույթին չպատկանող լիցքերի պոտենցիալ: Դիտարկենք $G(x, y) = E(x, y) + g(x, y)$ ֆունկցիան: Նա բավարարում է հետևյալ պայմաններին

ա. հանդիսանում է D^+ տիրույթում $g(x, y)$ հարմոնիկ ֆունկցիայի և $E(x, y)$ հիմնարար լուծման գումար,

բ. D^+ տիրույթի S եզրի վրա հավասար է զրոյի:

Այսպիսով, Գրինի ֆունկցիայի ռեգուլյար մասը հանդիսանում է D^- տիրույթում բաշխված լիցքերի պոտենցիալը, որը S եզրի վրա ընդունում է - $E(x, y)|_S$ արժեքը:

R^2 տարածության մեջ միակապ տիրույթների համար Գրինի ֆունկցիան կարելի է կառուցել *կոնֆորմ արտապատկերումների* օգնությամբ: Դիտարկենք S եզրով D հարթ միակապ տիրույթը: Ենթադրենք, հայտնի է այն $w = w(z, z_0)$ անալիտիկ ֆունկցիան, որը կոնֆորմ արտապատկե-

րում է D տիրույթը միավոր շրջանի վրա այնպես, որ z_0 կետը արտապատկերվում է սկզբնակետին: Այդ դեպքում

$$G(z, z_0) = \ln \frac{1}{|w(z, z_0)|} \quad (1)$$

ֆունկցիան կլինի Գրինի ֆունկցիան D տիրույթի համար:

Թեորեմ: Եթե $u|_S = f$ եզրային պայմանով Դիրիխլեի ներքին խնդիրը $C^1(\overline{D})$ դասում ունի լուծում, ապա այն ներկայացվում է

$$u(x) = -\frac{1}{\omega_n} \int_S f(y) \frac{\partial G(x, y)}{\partial \nu} dS_y \quad (2)$$

բանաձևով, որտեղ ν -ն S մակերևույթի արտաքին նորմալն է, իսկ ω_n -ը R_n -ում միավոր սֆերայի մակերեսն է՝ $\omega_n = \frac{2\pi^{n/2}}{\Gamma(n/2)}$:

Սահմանում: D տիրույթում Լապլասի հավասարման *սեյմանի ներքին խնդրի Գրինի ֆունկցիա* կոչվում է այն $G(x, y)$ ֆունկցիան, որը բավարարում է հետևյալ երկու պայմաններին

ա. այն ունի

$$G(x, y) = E(x, y) + g(x, y)$$

տեսքը, որտեղ $E(x, y)$ -ը Լապլասի հավասարման հիմնարար լուծումն է, իսկ $g(x, y)$ -ը հարմոնիկ ֆունկցիա է D տիրույթում և ըստ x և ըստ y փոփոխականների:

բ. երբ x կամ y կետը գտնվում է D տիրույթի S եզրի վրա

$$\frac{\partial G}{\partial n} \Big|_S = -\frac{\omega_n}{|S|}, \quad (3)$$

որտեղ $|S|$ -ը S մակերևույթի մակերեսն է:

Նեյմանի ներքին խնդրի Գրինի ֆունկցիան սիմետրիկ չէ: Այն կլինի սիմետրիկ, եթե պահանջվի, որ $\int_S G(y, x) d\sigma$ -ն կախված չլինի $x \in D$ կետից:

Նեյմանի արտաքին խնդրի դեպքում, Գրինի ֆունկցիայի սահմանման մեջ (3) պայմանը հարկավոր է փոխարինել

$$\frac{\partial G}{\partial n}|_S = 0, \quad (4)$$

պայմանով: Նեյմանի արտաքին խնդրի Գրինի ֆունկցիան սիմետրիկ է:

Թեորեմ: Եթե $\frac{\partial u}{\partial n}|_S = f$ եզրային պայմանով Նեյմանի ներքին խնդիրը $C^1(\overline{D})$ դասում ունի լուծում, ապա այն ներկայացվում է

$$u(x) = \frac{1}{\omega_n} \int_S f(y) G(y, x) d\sigma_y + \frac{1}{|S|} \int_S u(y) d\sigma_y \quad (5)$$

բանաձևով:

Նեյմանի արտաքին խնդրի լուծումը ներկայացվում է

$$u(x) = - \int_S f(y) G(y, x) d\sigma_y \quad (6)$$

բանաձևով:

109. Կառուցել $z \geq 0$ կիսատարածության համար Դիրիխլեի խնդրի Գրինի ֆունկցիան:

110. Օգտվելով նախորդ խնդրի պատասխանից գտնել հողակցված, իդեալական հաղորդիչ $z = 0$ հարթության վրա տեղադրված e կետային լիցքի պոտենցիալը: Հաշվել ինդուկցված մակերևութային լիցքերի խտությունը: Կառուցել Դիրիխլեի խնդրի լուծումը $z \geq 0$ կիսատարածության համար:

111. Կառուցել $z = 0$ և $z = l$ հարթություններով սահմանափակված շերտի Դիրիխլեի խնդրի Գրինի ֆունկցիան: Ուսումնասիրել ստացված շերտի զուգամիտությունը և այն ածանցելու հնարավորությունը:

112. Կառուցել $z = 0$, $z = l$ և $x = 0$ հարթություններով սահմանափակված կիսաշերտի Դիրիխլեի խնդրի Գրինի ֆունկցիան:

113. Կառուցել $\alpha = \frac{\pi}{n}$ (n -ը բնական է) մեծությամբ երկնիստ անկյան Դիրիխլեի խնդրի Գրինի ֆունկցիան:

114. Կառուցել կիսահարթության Դիրիխլեի խնդրի Գրինի ֆունկցիան և նրա օգնությամբ լուծել Դիրիխլեի խնդիրը $y > 0$ կիսահարթության համար, եթե

$$u(x, 0) = \begin{cases} 0, & x < 0 \\ V, & x > 0 \end{cases} :$$

115. Կառուցել $\alpha = 0$ և $\alpha = \frac{\pi}{n}$ (n -ը բնական է) ճառագայթներով սահմանափակված տիրույթի Դիրիխլեի խնդրի Գրինի ֆունկցիան:

116. Կառուցել R շառավղով գնդի համար Դիրիխլեի խնդրի Գրինի ֆունկցիան:

117. Գտնել հողակցված սֆերայի ներսում գտնվող e կետային լիցքի ստեղծած էլեկտրաստատիկ դաշտի պոտենցիալը: Հաշվել սֆերայի վրա ինդուկցված լիցքերի մակերևութային խտությունը և լուծել Դիրիխլեի ներքին խնդիրը սֆերայի համար:

118. Կառուցել R շառավղով

ա. շրջանի,

բ. կիսաշրջանի,

գ. քառորդ շրջանի,

դ. $\alpha = \frac{\pi}{n}$ (n -ը բնական է) անկյունով սեկտորի,

ե. կիսագնդի,

զ. քառորդ գնդի

Դիրիխլեի խնդրի Գրինի ֆունկցիաները:

119. Կառուցել a և b շառավղովներով համակենտրոն սֆերաներով սահմանափակված սֆերիկ շերտի Դիրիխլեի խնդրի Գրինի ֆունկցիան: Ուսումնասիրել ստացված շարքի զուգամիտությունը և այն ածանցելու հնարավորությունը:

120. Կառուցել $a \leq r \leq b$ օղակի Դիրիխլեի խնդրի Գրինի ֆունկցիան: Ուսումնասիրել ստացված շարքի զուգամիտությունը և այն ածանցելու հնարավորությունը:

121. Ցույց տալ, որ եթե $u(x)$ ֆունկցիան հարմոնիկ է D տիրույթում, ապա

$$v(x) = \sum_{i=1}^n x_i \frac{\partial u}{\partial x_i}$$

ֆունկցիան նույնպես հարմոնիկ է այդ տիրույթում: Օգտվելով այս փաստից լուծել Նեյմանի խնդիրը գնդի համար:

122. Օգտվելով կոնֆորմ արտապատկերումներից՝ կառուցել հետևյալ տիրույթների Դիրիխլեի խնդրի Գրինի ֆունկցիաները

ա. $y > 0$ կիսահարթություն,

բ. $|z| < R$, $y > 0$ կիսաշրջան,

գ. $x > 0$, $y > 0$ քառորդ,

դ. $0 < y < \pi$ շերտ:

§4. Պոտենցիալներ և նրանց կիրառությունները

Դիցուք D -ն սահմանափակ տիրույթ է R^n տարածությունում, որի եզրը S -ողորկ մակերևույթն է, իսկ μ -ն այդ տիրույթում տրված որևէ բացարձակ ինտեգրելի ֆունկցիա է:

Սահմանում.

$$u(x) = \int_D E(x, y) \mu(y) d\tau_y \quad (1)$$

ֆունկցիան կոչվում է D տիրույթում $\mu(y)$ խտությամբ բաշխված *զանգվածի ծավալային պոտենցիալ* որտեղ $E(x, y)$ -ը Լապլասի հավասարման հիմնարար լուծումն է:

Ծավալային պոտենցիալն ունի հետևյալ կարևոր հատկությունները.

ա. եթե $\mu(y)$ ֆունկցիան անընդհատ է $\overline{D}$ -ում, ապա $u(x)$ -ն անընդհատ է և ունի մինչև առաջին կարգի անընդհատ ածանցյալներ R^n -ում, հարմոնիկ է $D \cup S$ -ից դուրս, $u(\infty) = 0$, եթե $n > 2$, իսկ $n = 2$ դեպքում աճում է ինչպես $\ln|x|$ ($x \rightarrow \infty$) ֆունկցիան:

բ. եթե $\mu(y)$ ֆունկցիան ունի առաջին կարգի անընդհատ մասնակի ածանցյալներ D -ում և անընդհատ է $\overline{D}$ -ում, ապա $u(x)$ -ն ունի մինչև երկրորդ կարգի անընդհատ մասնակի ածանցյալներ D -ում և այդտեղ բավարարում է

$$\Delta u = -\omega_n \mu(x)$$

Պուասոնի հավասարմանը, որտեղ ω_n -ը միավոր սֆերայի մակերեսն է

$$(\omega_n = \frac{1}{\Gamma(\frac{n}{2})} 2\pi^{\frac{n}{2}}):$$

Ենթադրենք μ -ն S -ի վրա տրված որևէ անընդհատ ֆունկցիա է:

Սահմանում.

$$w(x) = \int_S \mu(y) \frac{\partial E(x, y)}{\partial n} d\sigma \quad (2)$$

Ֆունկցիան կոչվում է *կրկնակի շերտի պոտենցիալ*, որտեղ n -ը S մակերեսի y կետում տարված արտաքին նորմալն է:

Կրկնակի շերտի պոտենցիալն ունի հետևյալ կարևոր հատկությունները.

ա. $w(x)$ -ը S մակերևույթի վրա չգտնվող կետերում ունի բոլոր կարգի ածանցյալներ և բավարարում է Լապլասի հավասարմանը:

բ. $w(x)$ -ը ձգտում է զրոյի $|x|^{1-n}$ արագությամբ, երբ $|x| \rightarrow \infty$:

գ. եթե S -ը Լյապունովյան մակերևույթ է, ապա $w(x)$ -ը գոյություն ունի նաև մակերևույթի x_0 կետում և ունի $w_+(x_0)$ -ներսից և $w_-(x_0)$ -դրսից սահմաններ, որոնք հաշվվում են հետևյալ բանաձևերով

$$\begin{aligned} w_+(x_0) &= w(x_0) - \frac{\omega_n}{2} \mu(x_0), \\ w_-(x_0) &= w(x_0) + \frac{\omega_n}{2} \mu(x_0) : \end{aligned} \quad (3)$$

Այս երկու բանաձևերից ստացվում է $w(x)$ ֆունկցիայի թռիչքի համար հետևյալ

$$w_-(x_0) - w_+(x_0) = \omega_n \mu(x)$$

բանաձևը:

դ. Մասնավոր դեպքում, երբ $\mu = 1$, $w(x)$ -ը կոչվում է *Գաուսի ինտեգրալ*, որն ունի հետևյալ արժեքները

$$\int_S \frac{\partial E(x, y)}{\partial n} d\sigma = \begin{cases} 0, & x \notin D \cup S \\ -\omega_n, & x \in D \end{cases} : \quad (4)$$

եթե S -ը Լյապունովյան մակերևույթ է, ապա

$$\int_S \frac{\partial E(x, y)}{\partial n} d\sigma = -\frac{\omega_n}{2}, \quad (5)$$

եթե $x \in S$:

ե. կրկնակի շերտի պոտենցիալը կարելի է գրել նաև հետևյալ տեսքով

$$w(x) = - \int_S \mu(y) \frac{\cos \varphi}{|y - x|^{n-1}} d\sigma, \quad (6)$$

որտեղ φ -ն $y - x$ վեկտորի և n նորմալի կազմած անկյունն է:

Սահմանում. S մակերևույթի վրա $\mu \in C(S)$ խտությամբ բաշխված զանգվածի *պարզ շերտի պոտենցիալ* կոչվում է հետևյալ ֆունկցիան

$$v(x) = \int_S \mu(y) E(x, y) d\sigma : \quad (7)$$

Պարզ շերտի պոտենցիալն ունի հետևյալ կարևոր հատկությունները.

ա. $v(x)$ -ը S մակերևույթին չափատկանող կետերում ունի բոլոր կարգի ածանցյալներ և բավարարում է Լապլասի հավասարմանը:

բ. եթե $n > 2$, ապա $v(x) \rightarrow 0$ $\frac{1}{|x|^{n-2}}$ արագությամբ, երբ $|x| \rightarrow \infty$, իսկ եթե $n = 2$, ապա $v(x)$ -ն աճում է ինչպես $\ln|x|$ ($|x| \rightarrow \infty$) ֆունկցիան:

գ. $v(x)$ -ն անընդհատ ֆունկցիա է R^n -ում:

դ. Դիցուք S -ը L յապուստվյալ մակերևույթ է, իսկ n_0 -ն S -ի x_0 կետում տարված արտաքին նորմալն է: Այդ դեպքում նորմալի վրա գտնվող x կետում

$$\frac{\partial u(x)}{\partial n_0} = - \int_S \mu(y) \frac{\cos \psi}{|y - x|^{n-1}} d\sigma_y, \quad (8)$$

որտեղ ψ -ն $y - x$ վեկտորի և միևնույն n_0 արտաքին նորմալի կազմած անկյունն է: Դայտնի է, որ (8) ինտեգրալը որոշված է նաև մակերևույթի x_0 կետում, որը կնշանակենք հետևյալ ձևով

$$- \int_S \mu(y) \frac{\cos \psi_0}{|y - x_0|^{n-1}} d\sigma_y :$$

ե. $v(x)$ -ը S մակերևույթի կետերում ունի ներսից և դրսից կանոնավոր նորմալ ածանցյալներ, որոնք որոշվում են հետևյալ բանաձևերով

$$\left[\frac{\partial v(x_0)}{\partial n_0} \right]_+ = - \int_S \mu(y) \frac{\cos \psi_0}{|y - x_0|^{n-1}} d\sigma_y - \frac{\omega_n}{2} \mu(x_0),$$

$$\left[\frac{\partial v(x_0)}{\partial n_0} \right]_- = - \int_S \mu(y) \frac{\cos \psi_0}{|y - x_0|^{n-1}} d\sigma + \frac{\omega_n}{2} \mu(x_0) :$$

Այս երկու բանաձևերից կունենանք հետևյալ բանաձևը

$$\left[\frac{\partial v(x_0)}{\partial n_0} \right]_- - \left[\frac{\partial v(x_0)}{\partial n_0} \right]_+ = \omega_n \mu(x_0) :$$

Դիտողություն. $n = 2$ դեպքում պոտենցիալներն անվանում են *լոգարիթմական*:

123. Մաթեմատիկորեն ձևակերպել և լուծել այն եզրային խնդիրը, որին կբավարարի a շառավղով և $\mu = \mu_0$ հաստատուն խտություն ունեցող գնդի ծավալային պոտենցիալը:

124. Գտնել a շառավղով և $\mu = \mu_0$ հաստատուն խտությամբ գնդի ծավալային պոտենցիալը՝ ուղղակի հաշվելով այն:

125. Գտնել $a \leq r \leq b$ սֆերիկ շերտում $\mu = \mu_0$ հաստատուն խտությամբ բաշխված զանգվածի ծավալային պոտենցիալը:

126. Գտնել a շառավղով գնդում $\mu = \mu_1$ և $a < b < r < c$ սֆերիկ շերտում $\mu = \mu_2$ հաստատուն խտություներով բաշխված զանգվածի ծավալային պոտենցիալը:

127. Գտնել c շառավղով գնդում $\mu = \mu(r)$ փոփոխական խտությամբ բաշխված զանգվածի ծավալային պոտենցիալը: Ստանալ այստեղից **125** և **126** խնդիրների լուծումները:

128. Մաթեմատիկորեն ձևակերպել և լուծել այն եզրային խնդիրը, որին կբավարարի համասեռ ($\mu = \mu_0$) սֆերիկ պարզ շերտի պոտենցիալը:

129. Գտնել համասեռ ($\mu = \mu_0$) սֆերիկ պարզ շերտի պոտենցիալը՝ ուղղակի հաշվելով այն:

130. Գտնել $z = 0$ իղեալական հաղորդիչ հարթության վրա տեղադրված գնդում $\mu = \mu_0$ հաստատուն խտությամբ բաշխված ծավալային լիցքերի ստեղծած էլեկտրաստատիկ դաշտը:

131. Մաթեմատիկորեն ձևակերպել և լուծել այն եզրային խնդիրը, որին կբավարարի լիցքի հաստատուն ($\mu = \mu_0$) խտություն ունեցող շրջանի լոգարիթմական պոտենցիալը:

132. Գտնել լիցքի հաստատուն ($\mu = \mu_0$) խտություն ունեցող շրջանի լոգարիթմական պոտենցիալը՝ ուղղակի հաշվելով այն:

133. Հաշվել լիցքի հաստատուն ($\mu = \mu_0$) խտություն ունեցող հատվածի ($-a \leq x \leq a$) պարզ շերտի լոգարիթմական պոտենցիալը:

134. Հաշվել լիցքի հաստատուն ($\mu = \mu_0$) խտություն ունեցող հատվածի ($-a \leq x \leq a$) կրկնակի շերտի լոգարիթմական պոտենցիալը:

135. Լուծել Դիրիխլեի ներքին խնդիրը a շառավղով շրջանի համար՝ լուծումը փնտրելով կրկնակի շերտի պոտենցիալի տեսքով:

136. Լուծել Դիրիխլեի արտաքին խնդիրը a շառավղով շրջանի համար՝ լուծումը փնտրելով կրկնակի շերտի պոտենցիալի տեսքով:

137. Լուծել Նեյմանի խնդիրը α շառավղով շրջանի համար՝ լուծումը փնտրելով պարզ շերտի պոտենցիալի տեսքով:

138 Լուծել Դիրիխլեի և Նեյմանի խնդիրները կիսատարածության համար:

139. Լուծել Դիրիխլեի խնդիրը կիսահարթության համար:

§1. Ֆուրիեի եղանակը

հիպերբոլական տեսակի հավասարումների համար

Փոփոխականների անջատման եղանակով կարելի է կառուցել բավականաչափ լայն դասի հավասարումների համար, այսպես կոչված, *խառը խնդիրների* լուծումները: Նկարագրենք այդ եղանակի ընդհանուր պատկերը հետևյալ մասնավոր հիպերբոլական հավասարման համար՝

$$\frac{\partial}{\partial x} \left(p(x) \frac{\partial u}{\partial x} \right) - q(x)u = \rho(x) \frac{\partial^2 u}{\partial t^2}, \quad (1)$$

որտեղ $p(x)$, $p'(x)$, $q(x)$, $\rho(x)$ ֆունկցիաներն անընդհատ են $0 \leq x \leq l$ հատվածում և $p(x) > 0$, $q(x) \geq 0$, $\rho(x) > 0$:

Խառը խնդիրը կայանում է հետևյալում՝ գտնել (1) հավասարման այնպիսի լուծում, որը բավարարի

$$\begin{aligned} \alpha u(0, t) + \beta \frac{\partial u(0, t)}{\partial x} &= 0, \\ \gamma u(l, t) + \delta \frac{\partial u(l, t)}{\partial x} &= 0 \end{aligned} \quad (2)$$

եզրային պայմաններին (α , β , γ , δ -ն հաստատուններ են, $\alpha^2 + \beta^2 \neq 0$, $\gamma^2 + \delta^2 \neq 0$) և

$$u(x, 0) = \varphi(x), \quad \frac{\partial u(x, 0)}{\partial t} = \psi(x), \quad 0 \leq x \leq l \quad (3)$$

սկզբնական պայմաններին:

Փոփոխականների անջատման եղանակի էությունը կայանում է հետևյալում՝ սկզբում փնտրում ենք (2) եզրային պայմաններին բավարարող (1) հավասարման $T(t)X(x)$ տեսքի ոչ զրոյական լուծումներ

$$u(x, t) = X(x)T(t) \quad (4)$$

Տեղադրելով այն (1) հավասարման մեջ և հաշվի առնելով, որ $X(x) \neq 0$ ու $T(t) \neq 0$, ստանում ենք

$$\frac{\frac{d}{dx}[p(x)X'(x)] - q(x)X(x)}{\rho(x)X(x)} = \frac{T''(t)}{T(t)} : \quad (5)$$

Այս հավասարության ձախ մասը կախված է միայն x փոփոխականից, իսկ աջը՝ միայն t -ից: Դա հնարավոր է միայն այն դեպքում երբ (5) հավասարության երկու մասն էլ նույն հաստատունն են: Նշանակենք այդ հաստատունը λ -ով: Այդ դեպքում (5) հավասարությունից կստանանք երկու սովորական դիֆերենցիալ հավասարումներ

$$T''(t) + \lambda T(t) = 0, \quad (6)$$

$$\frac{d}{dx}[p(x)X'(x)] + [\lambda \rho(x) - q(x)]X(x) = 0 : \quad (7)$$

Տեղադրելով (4) արտահայտությունը նաև (2) եզրային պայմանների մեջ, կունենանք

$$\begin{aligned} \alpha X(0) + \beta X'(0) &= 0, \\ \gamma X(l) + \delta X'(l) &= 0 : \end{aligned} \quad (8)$$

(7)-(8) եզրային խնդիրը կոչվում է *Շտուրմ-Լիուվիլի խնդիր* (կամ կարճ Շ-Լ խնդիր): λ պարամետրի այն արժեքները, որոնց դեպքում (7) հավասարումը ունի ոչգրոյական լուծում, կոչվում են *սեփական արժեքներ*, իսկ իրենք լուծումները՝ *սեփական ֆունկցիաներ*: Բոլոր սեփական արժեքների բազմությունը կոչվում է (7)-(8) խնդրի *սպեկտր*, իսկ սպեկտրի և սեփական ֆունկցիաների որոնումը՝ *սպեկտրային խնդիր*: Քանի որ (7) հավասարումը համասեռ է, իսկ (8) պայմանները գրոյական, ապա սեփական ֆունկցիաները որոշվում են հաստատուն բազմապատկիչի ճշտությամբ: Ընտրենք այդ բազմապատկիչն այնպես, որ

$$\int_0^l \rho(x) X_k^2(x) dx = 1,$$

որտեղ $X_k(x)$ -ը λ_k սեփական արժեքին համապատասխանող սեփական ֆունկցիան է: Այս պայմանին բավարարող սեփական ֆունկցիաները կոչվում են նորմավորված: Նշենք սեփական ֆունկցիաների և սեփական արժեքների որոշ հատկություններ.

ա. ամեն մի սեփական արժեքի համապատասխանում է միայն մեկ սեփական ֆունկցիա (հաստատուն բազմապատկիչի ճշտությամբ),

բ. տարբեր սեփական արժեքներին համապատասխանող սեփական ֆունկցիաներն օրթոգոնալ են $\rho(x)$ կշռով, այսինքն

$$\int_0^l \rho(x) X_k(x) X_m(x) dx = 0 \quad (k \neq m),$$

գ. բոլոր սեփական արժեքներն իրական են,

դ. գոյություն ունեն անվերջ քանակությամբ սեփական արժեքներ

$$\lambda_1 < \lambda_2 < \dots < \lambda_n < \dots, \quad \lim \lambda_n = +\infty,$$

ե. որոշ լրացուցիչ պայմանների դեպքում սեփական արժեքները բացասական չեն, իսկ սեփական ֆունկցիաները կազմում են լրիվ համակարգ:

(6) հավասարման ընդհանուր լուծումը նշանակենք $T_k(t)$ -ով: Ունենք

$$T_k(t) = A_k \cos \sqrt{\lambda_k} t + B_k \sin \sqrt{\lambda_k} t,$$

որտեղ A_k -ն և B_k -ն կամայական հաստատուններ են:

Կամայական

$$u_k(x, t) = X_k(x) T_k(t) = (A_k \cos \sqrt{\lambda_k} t + B_k \sin \sqrt{\lambda_k} t) X_k(x)$$

տեսքի ֆունկցիան կլինի (1) հավասարման լուծում և կբավարարի (2) եզրային պայմաններին:

(1)-(3) խառը խնդրի լուծումը որոնենք հետևյալ տեսքով

$$u(x, t) = \sum_{k=1}^{\infty} (A_k \cos \sqrt{\lambda_k} t + B_k \sin \sqrt{\lambda_k} t) X_k(x): \quad (10)$$

ենթադրենք, որ (10) շարքը և երկու անգամ ըստ x և t փոփոխականների անդամ առ անդամ ածանցելուց ստացված շարքերը հավասարաչափ գումարեն: Ակնհայտ է, որ (10) շարքի գումարը, այդ պայմանների դեպքում, կբավարարի (1) հավասարմանը և (2) եզրային պայմաններին: Պահանջելով, որ (10) շարքի գումարը բավարարի նաև (3) սկզբնական պայմաններին, ստանում ենք

$$\sum_{k=1}^{\infty} A_k X_k(x) = \varphi(x), \quad (11)$$

$$\sum_{k=1}^{\infty} B_k \sqrt{\lambda_k} X_k(x) = \psi(x) : \quad (12)$$

երբ $\{X_k(x)\}_{k=1}^{\infty}$ սեփական ֆունկցիաների համակարգը լրիվ է և օրթոնորմավորված, A_k և B_k գործակիցների որոնման համար (11) և (12)-ից ունենք

$$A_k = \int_0^l \rho(x) \varphi(x) X_k(x) dx,$$

$$B_k = \frac{1}{\sqrt{\lambda_k}} \int_0^l \rho(x) \psi(x) X_k(x) dx :$$

Տեղադրելով A_k և B_k հաստատունների արժեքները (10) շարքի մեջ՝ կստանանք (1)-(3) խառը խնդրի լուծումը:

Ընդհանուր դեպքում հնարավոր չէ գտնել Շ-Լ խնդրի լուծումը: Այն մասնավոր դեպքում, երբ (1) հավասարման գործակիցները հաստատուններ են խնդրի լուծումը կառուցվում է բացահայտորեն: Այսպես, օրինակ,

$$u_{tt} = a^2 u_{xx} \quad (5')$$

լարի տատանման հավասարման դեպքում (6) և (7) հավասարումներն ունեն համապատասխանաբար հետևյալ տեսքերը՝

$$T''(t) + a^2 \lambda T(t) = 0, \quad (6')$$

$$X''(x) + \lambda X(x) = 0, \quad 0 < x < l: \quad (7')$$

Պարզության համար ենթադրենք, որ եզրային պայմանները ունեն

$$X(0) = 0, \quad X(l) = 0 \quad (8')$$

տեսքը: Այս դեպքում (7') – (8') խնդրի սեփական արժեքները գտնվում են

$$\lambda_k = \left(\frac{\pi k}{l} \right)^2, \quad k = 1, 2, \dots:$$

Նրանց համապատասխան գծորեն անկախ ֆունկցիաները հանդիսանում են

$$X_k(x) = \sin \frac{\pi k}{l} x, \quad k = 1, 2, \dots,$$

որը լրիվ համակարգ է $(0, l)$ միջակայքում, իսկ (6') հավասարման լուծումները տրվում են

$$T_k(t) = A_k \cos \frac{a\pi k}{l} t + B_k \sin \frac{a\pi k}{l} t$$

տեսքով:

Փոփոխականների անջատման եղանակը կարելի է կիրառել նաև անհամասեռ հավասարման և անհամասեռ եզրային պայմանների դեպքում: Սահմանափակվենք հետևյալ խառը խնդրի դիտարկումով

$$u_{xx} - \frac{1}{a^2} u_{tt} = f(x, t) \quad (13)$$

$$\begin{aligned} a_1 u_x(0, t) + b_1 u(0, t) &= \mu(t), \\ a_2 u_x(l, t) + b_2 u(l, t) &= \nu(t), \\ a_k^2 + b_k^2 &\neq 0 \quad k = 1, 2, \end{aligned} \quad (14)$$

$$u(x, 0) = \varphi(x), \quad u_t(x, 0) = \psi(x): \quad (15)$$

a_1, a_2, b_1, b_2 հաստատունների վրա դրվող որոշ լրացուցիչ պայմանների դեպքում որոնելի ֆունկցիայի

$$u(x, t) = v(x, t) + w(x, t)$$

փոխարինումով, որտեղ

$$w(x, t) = (\gamma_1 x^2 + \gamma_2 x + \gamma_3)\mu(t) + (\delta_1 x^2 + \delta_2 x + \delta_3)\nu(t),$$

(13)-(15) խառը խնդիրը բերվում է համասեռ եզրային պայմաններով հետևյալ խառը խնդրին

$$v_{xx} - \frac{1}{a^2} v_{tt} = F(x, t) \quad (16)$$

$$a_1 v_x(0, t) + b_1 v(0, t) = 0, \quad (17)$$

$$a_2 v_x(l, t) + b_2 v(l, t) = 0,$$

$$v(x, 0) = \varphi_1(x), \quad v_t(x, 0) = \psi_1(x), \quad (18)$$

որտեղ

$$F(x, t) = f(x, t) - w_{xx} + \frac{1}{a^2} w_{tt},$$

$$\varphi_1(x) = w(x, 0), \quad \psi_1(x) = \psi(x) - w_t(x, 0) :$$

Ենթադրենք, որ գոյություն ունի

$$X'' + \lambda X = 0, \quad (19)$$

$$a_1 X'(0) + b_1 X(0) = 0, \quad a_2 X'(l) + b_2 X(l) = 0 \quad (20)$$

Շ-Լ խնդրի $X_n(x)$, $n = 1, 2, \dots$ գծորեն անկախ սեփական ֆունկցիաների լրիվ օրթոնորմավորված համակարգ: $F(x, t)$, $\varphi_1(x)$ և $\psi_1(x)$ ֆունկցիաները ներկայացնելով հետևյալ շարքերով

$$F(x, t) = \sum_{k=1}^{\infty} c_k(t) X_k(x), \quad (21)$$

$$\varphi_1(x) = \sum_{k=1}^{\infty} d_k X_k(x), \quad \psi_1(x) = \sum_{k=1}^{\infty} e_k X_k(x), \quad (22)$$

(16)-(18) խնդրի լուծումը փնտրենք

$$v(x, t) = \sum_{k=1}^{\infty} T_k(t) X_k(x) \quad (23)$$

տեսքով: Տեղադրելով (23)-ը (16) հավասարման մեջ ու հաշվի առնելով (21), (22) վերլուծությունները, կստանանք

$$\sum_{k=1}^{\infty} (T_k(t) X_k''(x) - \frac{1}{a^2} T_k''(t) X_k(x)) = \sum_{k=1}^{\infty} c_k(t) X_k(x), \quad (24)$$

$$\begin{aligned} \sum_{k=1}^{\infty} T_k(0) X_k(x) &= \sum_{k=1}^{\infty} d_k X_k(x), \\ \sum_{k=1}^{\infty} T_k'(0) X_k(x) &= \sum_{k=1}^{\infty} e_k X_k(x) : \end{aligned} \quad (25)$$

Համաձայն (19)-ի (24)-ից կստանանք

$$\sum_{k=1}^{\infty} (T_k''(t) + a^2 \lambda_k T_k(t)) X_k(x) = -a^2 \sum_{k=1}^{\infty} c_k(t) X_k(x) : \quad (26)$$

Շնորհիվ $X_k(x)$, $k = 1, 2, \dots$ համակարգի գծորեն անկախության, (25)-ից և (26)-ից ստանում ենք հետևյալ խնդիրը

$$\begin{aligned} T_k''(t) + a^2 \lambda_k T_k(t) &= -a^2 c_k(t), \\ T_k(0) &= d_k, \quad T_k'(0) = e_k, \quad k \in N \end{aligned} \quad (27)$$

որը հեշտությամբ լուծվում է: Տեղադրելով $T_k(t)$ ֆունկցիաները (23)-ի մեջ, կստանանք (16)-(18) խնդրի լուծումը. եթե F , φ_1 , ψ_1 ֆունկցիաները

ապահովում են (23) շարքի և այն շարքերի հավասարաչափ զուգամիտությունը, որոնք կստացվեն նրանից ըստ x և t փոփոխականների երկու անգամ անդամ առ անդամ ածանցելով:

Երբ (13) հավասարման աջ մասը կախված է միայն x փոփոխականից

$$f(x, t) \equiv f(x),$$

իսկ (14) եզրային պայմանների աջ մասերը հաստատուններ են $\mu(t) = \mu_0$, $\nu(t) = \nu_0$ և

$$a_1 b_2 - a_2 b_1 - b_1 b_2 l \neq 0, \quad (28)$$

ապա

$$u(x, t) = v(x, t) + w(x)$$

փոխարինումով, որտեղ

$$\begin{aligned} w''(x) &= f(x), \\ a_1 w'(0) + b_1 w(0) &= \mu_0, \\ a_2 w'(l) + b_2 w(l) &= \nu_0, \end{aligned} \quad (29)$$

$v(x, t)$ ֆունկցիան որոշելու համար կստանանք հետևյալ խնդիրը

$$v_{xx} - \frac{1}{a^2} v_{tt} = 0,$$

$$a_1 v_x(0, t) + b_1 v(0, t) = 0,$$

$$a_2 v_x(l, t) + b_2 v(l, t) = 0,$$

$$v(x, 0) = \varphi(x) - w(x), \quad v_t(x, 0) = \psi(x) :$$

Իսկ (28) պայմանի դեպքում (29) խնդիրը միշտ ունի լուծում:

Որոշ դեպքերում (10) կամ (23) շարքերի գումարը կարող է ածանցյալներ չունենալ: Հետևաբար նրանք չեն կարող լինել դիֆերենցիալ հավասարման լուծում: Սակայն, ինչպես հայտնի է, ուրիշ լուծում փնտրելն անիմաստ է: Այս պատճառով, (10) և (23) շարքերի գումարները համարում են խառը խնդրի իսկական կամ ընդհանրացված լուծումներ:

140. $0 < x < l, t > 0$ կիսաշերտում լուծել

$$u_{tt} = a^2 u_{xx}$$

հավասարման համար հետևյալ խառը խնդիրները

(համասեռ եզրային պայմաններ)

ա. $u(0, t) = u(l, t) = u(x, 0) = 0, u_t(x, 0) = \sin \frac{2\pi}{l} x :$

բ. $u(0, t) = u_x(l, t) = 0, u(x, 0) = \sin \frac{5\pi}{2l} x, u_t(x, 0) = \sin \frac{\pi}{2l} x :$

գ. $u(0, t) = u_x(l, t) = 0, u(x, 0) = x,$
 $u_t(x, 0) = \sin \frac{\pi}{2l} x + \sin \frac{3\pi}{2l} x :$

դ. $u_x(0, t) = u(l, t) = 0, u(x, 0) = \cos \frac{\pi}{2l} x,$
 $u_t(x, 0) = \cos \frac{3\pi}{2l} x + \cos \frac{5\pi}{2l} x :$

ե. $u(0, t) = u(l, t) = u_t(x, 0) = 0,$

$$u(x, 0) = \begin{cases} \frac{h}{c} x, & 0 \leq x \leq c \\ \frac{h(l-x)}{l-c}, & c \leq x \leq l \end{cases} :$$

զ. $u(0, t) = u(l, t) = u_t(x, 0) = 0, u(x, 0) = hx(l-x) :$

է. $u(0, t) = u(l, t) = u(x, 0) = 0, u_t(x, 0) = hx(l-x) :$

ը. $u_x(0, t) = u_x(l, t) = 0, u(x, 0) = \cos \frac{\pi}{l} x,$
 $u_t(x, 0) = \cos \frac{5\pi}{l} x :$

բ. $u(0, t) = u(l, t) = u(x, 0) = 0,$

$$u_t(x, 0) = \begin{cases} v_0 \cos \frac{\pi(x-c)}{h}, & |x-c| < \frac{h}{2} \\ 0, & |x-c| > \frac{h}{2} \end{cases} :$$

գ. $u(0, t) = u_x(l, t) = u_t(x, 0) = 0, \quad u(x, 0) = rx, r = \text{const} :$

դ. $u(0, t) = u(l, t) = u(x, 0) = 0,$

$$u_t(x, 0) = \begin{cases} 0, & 0 \leq x < c - \delta, \\ v_0, & c - \delta \leq x \leq c + \delta \\ 0, & c + \delta < x \leq l \end{cases} :$$

ե. $u_x(-l, t) = u_x(l, t) = u_t(x, 0) = 0, \quad u(x, 0) = -\varepsilon x :$

զ. $u_x(0, t) = u_x(l, t) = 0, \quad u(x, 0) = x, \quad u_t(x, 0) = 1 :$

է. $u_x(0, t) = u_x(l, t) + hu(l, t) = 0, \quad h > 0,$

$$u(x, 0) = 0, \quad u_t(x, 0) = 1 :$$

ը. $u_x(0, t) - hu(0, t) = u_x(l, t) + hu(l, t) = 0, \quad h > 0,$

$$u(x, 0) = 1, \quad u_t(x, 0) = 0 :$$

թ. $u_x(0, t) = u_x(l, t) + hu(l, t) = 0, \quad h > 0,$

$$u(x, 0) = 0, \quad u_t(x, 0) = 1 :$$

ժ. $u(0, t) = u_x(l, t) + hu(l, t) = 0, \quad h > 0,$

$$u(x, 0) = 0, \quad u_t(x, 0) = x :$$

